

Ծ Ա Ղ Ի Կ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԿԻՍԼՄՍԵԱՅ ՀԱՆԴԵՍ



ԽՄԲԱԴՐԱՊԵՏ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Նոր Շրջան

ԹԻՒ 3

25 Մարտ 1895

Լեցուցե՛ք ձեր միտքն ու սիրտը
որչա՛րի ալ լայն շրջան:

ԿԼԾԹԻ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպ ի անցեալը
Ջղային բլիզները
Դամբարանները եւ Պոլսոյ կայսերական քանդարանը
Էսմոն եւ Ժիւլ ի Կոնստանտնուպոլս
Հասուածներ Տիկին Ժեռվեզեէն եւ Գաղափարներ ու զգա-
յութիւններէն
Կոյրք. — Դիւղական յիշատակներ
Նաղիկի բղբակցութիւնը

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ
ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԵԱՆ
ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ
ԷՏՄՈՆ ԵՒ ԺԻՒԼ ՏԸ ԿՈՆ-
ՔՈՒՌ
ԶԱՊԷԼ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Ճ. ԱՐԱՍԵԱՆ

Չագմագըճլար-Նօզուշու, Յակոբեան խան, քիւ 10

1895

THE JOURNAL

OF THE
ROYAL SOCIETY OF LONDON

FOR THE YEAR 1880

CONTENTS

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31	32	33	34	35	36	37	38	39	40	41	42	43	44	45	46	47	48	49	50	51	52	53	54	55	56	57	58	59	60	61	62	63	64	65	66	67	68	69	70	71	72	73	74	75	76	77	78	79	80	81	82	83	84	85	86	87	88	89	90	91	92	93	94	95	96	97	98	99	100
---	---	---	---	---	---	---	---	---	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	-----

Ծ Ա Ղ Ի Կ

Ազգային, Գրական և Քաղաքական

ԿԻՍՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԻՍ

ԽՄԲԱԳՐԱԳԵՏ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Նոր քրդան

Թիւ 3

25 Մարտ, 1895

Դ Ե Պ Ի Ա Ն Ց Ե Ա Ն Ը

Դիմացէ դիմաց նստեր են, բազմոցին երկու տնկիւնը, մէկն իր կարին վրայ, միւսն իր գուլպան հիւսելով խօսակցութեան մը մէջ, որ կ'երկարի, կ'երկարաձգուի:

Պատուհաններուն վարագոյրները փակ են. սեղանին վրայ կանթեղ մը դրուած է, որուն լոյսը պառաւին կիսադէմքը կ'երիտասարդացնէ, մինչդեռ իր ստուերը, խոչոր ու ծիծաղաշարժ, վարագոյրին վրայ՝ իր զլխուն շարժմանց համեմատ՝ կ'ընդլայնի ու կը կծկի: Միւս կինը, նուազ տարւոք, երեսնէն կ'ընդունի լոյսը, եւ այդ շեշտ պայծառութեան մէջ՝ դեռ թարմ ցաւի մը ծալքերը կը մատնէ իր աչքերուն տակ:

Պատէն, Աստուածածնի պատկեր մը, դեղնած, կը կախուի: Բազմոցին առջեւ պղնձէ կրակարանին մէջ սրուն կարմիրը լոյսին մէջ կը վառի, կրակները կը կարմրին, մոխիր կ'ըլլան, ու բարի տաքութիւն մը կը շողիտնայ անկից:

Միւս մինակ, երկու կիները կը խօսակցին: Նուազ տարւոքը, դեռ նոր, վեց ամիս առաջ, իր վերջին զաւակը կորսնցուցած է: Իր ցաւը հանգարտեր է արդէն, բայց անոր անցքը տխրութեան ակօսներ քաշեր է

դէմքէն, եւ գլխուն կոտորւած հակումը կը պատմէ լացերը որոնց մէջ այդ մայրը թապլտիկեր է:

Միւսը, պառաւը, սեւեր հագած, պառաւներուն սեւերը որոնք իրենց մեռած երիտասարդութեան սուգը կը թուին, անուշ համակերպութեան ձեւ մը ունի. որ իր դէմքին խաղաղ արտայայտութիւնը կուտայ անոնց որոնք կեանքը գիտեն եւ որոնք ալ պիտի չիլան: Դրացուհի մըն է, որ գիշերները կուգայ՝ սգաւորին մխիթարանք կարդալու, անոր մենութիւնը լեցնելու:

Անընդհատ, արագ մատներով, կ'աշխատին: Եւ խօսակցութիւնը կը շարունակուի, դանդաղ, լռութիւններով կտրուած: Յիշատակներու համարիչն է որ դադը սենեակին պարզուկ ընտանութեան մէջ, կը քակուի, հատիկ հատիկ կը քաշուի, ու կը տարածուի...

Անցեալին մէջ յետադարձ պտոյտն է, այնչափ քաղցր անոնց՝ որոնք ամէն բան հոն են ձգեր, եւ որոնք հիմա մինակ են ներկային մէջ: Գերեզմաններ կը բացուին, անհետացած դէմքեր կը վերակոչուին, եւ մեռելի հոգիներ, արթնցած, սենեակին մէջ կը ծածանին:

— Ողորմածհոգի հայրս ինծի ասանկ խրատ տուած է:

— Իմ ալ լուսահոգի մայրս ատանկ կ'ըսէր:

— Դուն կը ճանչնայիր իմին քոյրս:

— Ձէ: Իմ մեծ քոյրս, լուսահոգին, ան աղէկ կը ճանչնար:

— Մեծ քոյրդ ինչէն մեռաւ:

— Քրքրային տարին էր...

Ու հին, հին օրերը դուրս կ'ելլեն ժամանակին դամբարանէն: Երկու կիներն իրարու հետ կը բաղդատեն իրենց անցեալը, կը ջանան իրար համոզել՝ իւրաքանչիւրն ինքզինքը միւսէն աւելի դժբաղդ ցուցնելով:

— Ես չորս հատ զաւակ եմ ձեռքէ հաներ:

— Է՛, ե՛ս... Զաւակի ցաւը ինծի հարցուր դուն.

Կրօնքի խօսքեր կ'անցնին, Աւետարանի շունչ մը որ սենեակը կը խնկաւէտէ:

— Աստուած ասանկ ուզեր է:

Ու միշտ, ցաւի կամ ուրախութեան յուշերէն յետոյ, յանկերգի մը պէս կը կրկնուի, բոլոր այդ սրտի մխիթրին քրքրուքը յոյսի կայծով մը վառելով, բոլոր այդ դերեզմաննոցի մէջ թափառումի մեղմադժութիւնը հաւատքի լոյսով մը ոսկեղօծելով, ժողովրդական բարեպաշտութեան անուշ բառը որ մեռելներուն դէմքը կը լուսաստակէ, որ մահը ճաճանչում մը կ'ընէ:

— Լուսերուն մէջը պառկի...

Լռութիւնները երբեմն կ'երկնան, տրտում յիշատակներէն յետոյ

մանաւանդ: Մատները, այդ միջոցին, արագ, տենդոտ շարժումով մը, լաթերուն մէջէն կը վազեն, դուլպային վրայ կ'երերան: Կրակ մը կը փայլի մոխիրներուն մէջէն, կայծ մը կը ցատեցնէ. ու կը մարի:

Դրսէն, գիշերապահի մը ձականը քարերուն վրայ կը թնդայ: Ա՛լ չեն խօսիր. Թմրութիւն մը կը ծանրանայ հիմա մթնոլորտին մէջ: Մատները ձանձրացած են. յիշատակները յագնեցուցած են երկու հինցած ցաւազին ուղեղները: Կտր կտրողը, ձեռքերը յագնած կը զգայ, զլուսը պատին կը դնէ, եւ կը մնայ՝ աչքերը փակ: Ու պառոււր, գուլպան ձեռքէն ձգելով, թոյլ մրափի մը մէջ՝ զլուսը կտրածն ի վար կը կախէ:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ԶՂԱՅԻՆ ԲՁԻՋՆԵՐԸ

Ա.

Հիւսուածաբանութիւնը բոլորովին շինուած է ու կազմուած. Ռոպէնի, Վիրիւովի, Գորնիլլի աշխատութիւններէն յետոյ շատ բան չիկայ ընելիք. մարթէն մինչեւ ոսկորը, բոլոր գործաբանները գիտութեան տուջեւ պարզած են իրենց դադոնիքները. ա՛լ անոնց հիւսուածաբանութեան վրայ վիճաբանող չկայ:

Բայց ջղային դրութեան հիւսուածաբանութիւնը կը կազար խոշոր բաները գիտէինք, ուղեղին, ողնածուծին, ջիւերուն կազմութիւնը գիտէինք, բայց ջղային բջիջներուն վրայ քիչ ու գէշ ծանօթութիւնք միայն կային. «Երկու ջղային բջիջներ իրարու շարունակութիւնն են, միջին շառաւիղով մը միացած»: Սխալ էր այս, բայց ոչ ոք եւ կտամ շատ քիչեր խորհած էին թէ ջղային դրութեան պէս խրթին գործարան մը ամբողջութիւն մը չկրնար ունենալ, այլ առանձնականութիւն, թէ բջիջները պարզ կապերով իրարու հետ առնչութեան մէջ դրուած են եւ ոչ թէ շարունակութեամբ, թէ ուղեղային բջիջ մը շարունակութիւնը չէ ողնածուծային բջիջի մը, այլ յարաբերութեան մէջ դրուած են իրենց շառաւիղներով որոնք պարզապէս իրարու կը դաչին, առանց շարունակուելու:

Գահալ եղաւ, Ռամոնի Գահալ, նախկին դասախօս սպանիական գաւառական պլատիկ բժշկական դպրոցի մը, բրօֆէսէօր հիմա Մատրիտի

համալսարանը, որ վերջնականապէս ջղային դրութեամբ զրազող գիտուններուն ուշադրութիւնը գրաւեց իր գիւտերով:

Իրմէ առաջ, 1880 ին, խտալացի նշանաւոր գիտուն Կոլճի առաջին անգամ համարձակեցաւ երեսուն տարուան դասական գաղափարներու դէմ ելլել, ու նորութիւններ մտցնել գիտութեան մէջ, բայց իր ժամանակ անհաւատներ չատ էին:

Կոլճիի գիւտը ինը տարի պտըտեցաւ դպրոցէ դպրոց, չատ քիչեր կային անոր կարեւորութիւն տուող, որովհետեւ քիչեր կաշխատէին այս նորութեամբ: Մենք 1890 ի ուսանողներս, հին դասական սխալը կուսանէինք. դասական օրուան գրքերու մէջ հազիւ մէկ քանի տողեր զոհուած էին Կոլճիի նշանաւոր գիւտին:

Երբ 1889 ին Գահալ իր գիւտը հրատարակեց ու դասախօսեց աշակերտներուն առջեւ, դեռ հաւատացողները ու փորձողները բազմաթիւ չէին. երկու խոշոր տարիներու պէտք ունեցաւ այս նշանաւոր գիւտը Սպանիական սահմանագլուխը անցնելու համար: 1892 ի սկիզբները միայն առաջին անգամ ըլլալով բրօքէնէօր Մաթիաս-Տիւվալ բժշկական վարժարանն ըրած դասախօսութեանց մէջ յայտնեց Գահալի աշխատութեանց կարեւորութիւնը, ու համառօտ տեղեկութիւններ տուաւ նոր բջիջին վրայ: Նոյն տարին իր աշակերտներէն Տոքթոր Գոնիլ, Մաթիաս-Տիւվալի թեւադրութեամբ աշխատելով, իր փորձերը հազորդեց գիտական ընկերութեանց ⁽¹⁾: Տոքթոր Ա.գալայ 1893 ի վերջերը Սպաներէնէ թարգմանեց Գահալի դասերը ⁽²⁾: Նոր հեղինակները, որոնք կը զրազին ջղային դրութեամբ, ամենքն ալ գրեթէ ընդունած են նոր բջիջը:

Պատմական այս քանի մը տողերէն յետոյ, ըսեմ յօդուածիս նպատակը: Կոլճիի ու Գահալի նոր գաղափարները կերպարանափոխեցին գրեթէ բոլորովին հիստուածաբանութիւնը ու ջղային բջիջներուն բնախօսութիւնը: Հազիւ ընդունուած իբրեւ ճշմարտութիւն, քիչ ժամանակուան մէջ ամէն կողմէն բացատրութիւններ, տեսութիւններ թափեցան: Բջիջներուն ոչ շարունակութեամբ, այլ պարզ հպումով չատ մը էական իրողութիւններ պարզել փորձեցին, այս նորութիւններու վրայ տեղեկութիւն տալ կուգեմ:

Նախ երկու բառ ջղային դրութեան վրայ:

Ջղային դրութիւնն երկու նիւթէ բաղկացած է, եւ կամ այնպէս կ'երեւայ մեզի երբ կը նայինք պարզ աչքով. ճերմակ նիւթէ (substance blanche) ու դորշ նիւթէ (substance grise): Դորշ նիւթն է ճշմարիտ աղբիւրը ջղային դրութեան, անոր մէջ են ջղային բջիջները, անոնք ո-

(1) Mémoires de la Société de Biologie (1892, p. 179):

(2) Bulletin médical (1893, N. 72, 73, 74, 75, 76):

րոնք կը հրամայեն խորհիլը, զգալը, սիրելը, շարժիլը, անոնք որոնք մարդը կը զանազանեն անբանէն, անբանը բոյսէն:

Գորշ նիւթը, ջղային դրութեան ազնիւ մասը, մէկ երրորդ մասը կը կազմէ ամբողջ ուղեղին ու ողնածուծին: Ազօտ է ու տեղ տեղ թափանցիկ. իր գոյնը կը փոխուի տեղին համեմատ, թեթեւ մոխրագոյնէն մինչեւ մութ գորշի կը հասնի, անցնելով դեղին գորշագոյնէն, կարմրագոյն գորշին:

Գորշ նիւթը ողնածուծին մէջ պզտիկ մատի մը լայնութեամբ 45 սանթիմէթր (¹) երկայնութեամբ դաւազանի մը ձեւը ունի, ճերմակ նիւթէն շրջապատուած: Ուղեղին վրայ ճերմակ նիւթ չերեւար, որովհետեւ ըղլորովին ծածկուած է գորշ նիւթի 1 ¹/₂ էն մինչեւ 4 հազարորդամէթր հաստութեամբ խաւով մը:

Բայց ուղեղին մէջ ալ գորշ նիւթի պզտիկ կեդրոններ (noyaux) կան, որոնք իրարմէ կը տարբերին թէ ձեւով եւ թէ մեծութեամբ:

Ճերմակ նիւթը գրեթէ ամբողջովին ջղային թեւերէ բաղկացած է, թեւեր որոնք ջղային բջիջներէն կուգան, կը կարգադրուին, կը կազմակերպուին (ճերմակ նիւթին մէջ), կ'անցնին անոր սահմաններէն ու խումբ խումբ մարմնին այս կամ այն կողմը կ'երկննան, ջիղ անունին տակ, շարժելու մեր ձեռքը, մեր սիրտը կամ գլուխը, իրենց հրամայող բջիջներուն կամքին համեմատ:

Իր ճերմակ գոյնը միօրինակ է գրեթէ ամբողջ ուղեղին ու ողնածուծին մէջ. պզտիկ կարմիր բիծերով (կտրուած ուղեղի մը վրայ) որոնք արեան խողովակներ են:

Այսպէս գորշ նիւթը, ջղային դրութեան հոգին, իր մէջ կը պատ-րաստէ կաճիլ որ կ'անցնի ճերմակ հիւթին թեւերուն մէջէն, հրամայելու համար՝ ողնածուծին այս ինչ կամ այն ինչ շարժումը ընելու:

Նախնական այս համառօտ ծանօթութիւններէն ետքը միայն կրնանք անցնիլ ջղային բջիջներուն, զոր պիտի նկարագրենք երկրորդ յօդուածով մը:

Բարիկ

ՊՕՂՈՍ ՔՕԼՕԼԵԱՆ




(¹) Профессор Шарпейи Гамбур (Traité d'anatomie, Tome troisieme, 1889).

ԳԱՄՐԱՐԱՆՆԵՐԸ

Ե Ի

ՊՈԼՍՈՅ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ



Ք .

Ասիական քաղաքակրթութեան մէջ, գեղարուեստական տեսակէտով կարեւորութիւն ունեցող գերեզմանական շինութիւնները Եգիպտական դամբարաններուն նման այդչափ հին ժամանակներու մէջ չէ որ պիտի գտնենք. թերեւս անոնցմէ աւելի հին ժողովուրդներ, կառուցած են իրենց ննջեցեալներու բնակարաններ, ունեցած են իրենց յուղարկաւորական ծէսերը. բայց ասոնց ուսումնասիրութիւնը հնախօսական եւ պատմագիտական կարեւորութիւն մը կրնայ ընծայել քան արուեստագիտական: Ասորեստանի եւ Քաղզէաստանի քաղաքակրթութիւններէն մնացած աւերակներուն խուղարկութիւնները ցոյց կուտան թէ աւելի իրենց ուրիշ պէտքերուն համար կառուցած չնքնէն կրնանք գաղափար մը կազմել իրենց գեղարուեստագիտական ճաշակին վրայ քան թէ մեզի հասած շատ քիչ թուով քանի մը գերեզմաններէն: Յայտնի է թէ Քաղզէացւոց նման քաղաքակրթեալ ժողովուրդի մը գերեզմանական ճարտարապետութեան մասին թողած այս պակասը կարելի չէ վերագրել իրենց ննջեցեալներուն ունեցած նուազ յարգանքին կամ այդպիսի սովորութիւններու պատշաճութիւնը հասկցած չըլլալուն. պէտք է միշտ նկատի առնել թէ ինչ նշանակութիւն ունէր իրենց համար մահը. հեռուէին ըմբռնելէ հանդերձեալ կեանքը այնպէս ինչպէս կ'ըմբռնէին Եգիպտոցիք. հոգիին անմահութեան կը հաւատային միշտ, բայց երբեք չեն ենթադրած այնպիսի անջնջելի կապեր մարմնին եւ հոգիին մէջ: Շատ աւելի զրական եւ սոսկային դործերով շահագրգռուած ժողովուրդ, չեն կրցած ննջեցեալներով այդքան երկարօրէն զրազիլ: Բայց ասկից զատ աւելի զխաւոր երկրորդ պատճառ մը արգիլած է իրենց գամբանական ճարտարապետութեան զարգացումը: Երկիրը չմատակարարելով ոչ կրային քար, ոչ մարմարիտն, ոչ կրանիթ, վերջապէս այդ կարծր քարերէն եւ ոչ մէկը, քաղզէացի արուեստագէտները պարտաւորուած են գոհանալ իրենց հողովը, որով զործածելի միակ տարրը կ'ըլլայ աղիւսը. ժամանակը, ջերմութիւնը ու խոնավութիւնն ալ այն աստիճան կերպարանափոխած են այսօր այդ շինութիւնները, որ շատ անգամ աղիւսի կտորներ միայն կը հասնին մեր ձեռքը:

Քաղաքական գերեզմաններու բացակայութիւնը գրեթէ ամէն տեղ կը տեսնուի, բացառութեան համար զանազան կարծիքներ յայտնուած են, ոմանք ուզած են հաւատալ թէ Քաղաքացիք սովորութիւն ունէին իրենց գիականները գետը նետել: Բայց գիտութեան համար այս խիստ յուսահատեցուցիչ ենթադրութիւնը բարեքաղաքար անընդունելի կը դառնայ, չնորհիւ հնախօսական խուզարկութիւններու հետզհետէ երեւան հանած հակառակ ապացոյցներուն: Լօթֆըս հնախօսը կը կարծէ թէ հաւանականաբար Քաղաքացիք սովորութիւն ունեցած են, հարաւային Քաղաքաստանի երկու մեծ գերեզմանատունները զրկել իրենց ննջեցեալները, Ուրուք եւ Ուրու. արդարեւ հոն նորէն գտնուած են Քաղաքացւոց գերեզմանական ճարտարապետութեան գլխաւոր նշմարները:

Թէեւ Եփրատի ափերուն վրայ չեն գտնուիր այն մահարձանները, մասդապանները եւ բուրգերը որ կը զարդարեն Եգիպտոսը, սակայն եւ այնպէս գտնուած են կարգ մը գետնափոր դամբարաններ ի Մուկիթէր 2 մէթր միջին երկայնութեամբ, որոնք ընդհանրապէս բոլորակաձեւ կամ ձուձեւ են. աղիւսէ դմբէթ մը կամ հարթ տանիք մը կը ծածկէ զանոնք. հոս Եգիպտական ազդեցութիւնը բաւական զգալի կ'ըլլայ վստն զի կը նշմարուին տեղ տեղ ննջեցեալին գործածութեանը յատուկ կարգ մը առարկաներ:

Թագաւորները ունեցած են միայն իրենց որոշ մահարձանները, Բաբելոնի մէջ հին ապարաններ կը յատկացուին իրենց թաղմանը. Շաւր-ժինաի պալատը գրեթէ նեկրոսոլ մըն է. Բաբելական քրոնիկոնները, կանոնաւորապէս արձանագրած են իւրաքանչիւր թագաւորի թաղուած վայրը. Սայս թարգմանած է այդ արձանագրութիւններուն բոլորն ալ:

Գաւազ Ասորեստանցոյ, կարելի չէ նմանապէս որոշ բան մը ըսել իրենց գերեզմանական շինութիւններուն վրայ. իրենց եւ Քաղաքացւոց արուեստներն իրարու շատ կը նմանին, շինութեան միեւնոյն տարրերն են գործածուած. արգէն այս երկու ժողովուրդներուն զանազանութիւնը այս վերջին տարիներու մէջ է որ կ'սկսի որոշուիլ. հին պատմագիրները առանց տարբերութիւն մը զնելու՝ մէկ ժողովուրդ մը նկատած են զանոնք. բայց եղած հետազոտութիւնները եւ աւերակներու գիւտերը կը ցուցնեն թէ Ասորեստանցիք ընդհանրապէս աւելի դեղեցիկն զգացումն ունեցած են քան Քաղաքացիք. 1842 ին, Մուսուլի հիւսկատոս Պէմիլ Պոթթայի ի խորապատ կատարած խուզարկութիւններէն ի վեր է որ կարելի եղած է աւելի ճշգրիտ գաղափար մը կազմել այս ժողովուրդներուն գեղարուեստին վրայ. ինքը գտաւ Սարկոնի հսկայադործ պալատը. քիչ յետոյ Պ. Լայարտ, Քոյունձուքի խուզարկութիւններովը գտած թագաւորական շէնքերէն հետեւցուց թէ հոն պէտք էր ըլլար հին Նինուէն:

Երբայցեցիք, արդէն, գեղարուեստական տեսակէտով բան մը չեն ունեցած, — բայց ի քանի մը սրբազան կարասիներէ եւ անօթներէ որոնց աշխատութիւնը օտարներու կը յանձնէին: Նոյն իսկ Սողոմոնի տաճարին շինութեանը համար Տիրուհին Փիւնիկեցի ճարտարապետներ եկած էին. Ս. գրքին մէջ կը կարդանք որ փիւնիկեցի զործաւորներ, սլաւներուն վրայ եղերու, աւիւծներու, հրեշտակներու դէմքեր կը յօրինէին. ուրեմն Հրէից մէջ դամբարանական ու եւ է ճարտարութիւն մը փնտռել անօգուտ է:

Ասիական ժողովուրդներուն մէջ, ամենէն աւելի նշանակութեան արժանի դամբարաններ ունեցողը Փիւնիկեցի ժողովուրդն է. նախ՝ Փիւնիկեան դամբարաններու պահպանութիւնը աւելի ապահովուած է, երկրորդ՝ Փիւնիկեցիք իրենց վաճառականութեանը շնորհիւ առիթ ունեցած են միշտ Եգիպտացոց եւ Յունաց հետ հաղորդակցութեան մէջ ըլլալ, որով կրցած են այդ ժողովուրդներուն արուեստները եւ սովորութիւնները ներմուծել իրենց բարքերուն մէջ: Այսպէս Փիւնիկեան գեղարուեստը չունի ու եւ է ինքնատիպ յատկութիւն մը, այդ ժողովուրդին արուեստը պարզապէս ճարտարագիտական է, միմայն իրենց վաճառականութիւնը եւ շահը գիւրացնող, Եգիպտացոց մասթապաներուն նման ստորերկրեայ էին իրենց գերեզմանները. գետնափորէ մը կ'առաջնորդուէր ննջեցեալին սենեակները: Հողին մակերեւոյթը միայն, կը ծածկէին գերեզմանի մը գոյութիւնը հաստատող Մեկադիդ կոչուած քարէ նշանով մը: Դիակը ինչպէս Եգիպտացոց մէջ, դաճաղներու մէջ կը զետեղուէր. ասոնք ձեւով կը զանազանին շատ անգամ, մութ քարի վրայ քանդակուած մարդկային մարմին մը, երբեմն բազուկներն ալ նշանակուած, շուրջը արձանագրութիւններ. ճիշդ այն դաճաղներուն պէս որ յիշեցինք Եգիպտական դամբարաններուն վրայ մեր ըրած նախորդ ուսումնասիրութեանը մէջ: Արդէն այդ շահասէր եւ տնտեսագէտ ժողովուրդը, աւելի զիւրին դոտած է Եգիպտացիներէն ուղղակի հին դաճաղ մը գնել կամ նոյն իսկ երբեմն պարզապէս գողնալ իրենց ունեւը եղածը, աւրելով վրան գտնուած արձանագրութիւնները. այս կարծիքը կայ նոյն իսկ Լուվրի մէջ գտնուած Խաֆուազաբի ծանօթ դաճաղին մօտին. ամենէն նշանաւորն է Ամրիթի դամբարանը. Գրեթէ այսչափ բան միայն ճանչցուած էր մինչեւ հիմա Փիւնիկեցոց դամբարաններուն մօտին: Ահա ճիշդ ասոնցմէ զատ յիշուելիքներն են որ կ'ըլլան Մայրաքաղաքիս Թանգարանին փառքը եւ կուտան իրեն քանի մը տարիէ ի վեր աշխարհի մեծագոյն Թանգարաններու կարեւորութիւնը:

Պարսկական կրօնքը նախ թոյլատրած չէ ննջեցեալներու յատուկ կարգ մը սովորութիւններ ու արարողութիւններ հաստատել, զիակաները ոչ կը թաղէին, ոչ կ'այրէին եւ ոչ ալ ջուրը կը նետէին. թէ՛ հողը, թէ՛

կրակը եւ թէ՛ Զուրը պղծեւ էր իրենց համար, Տափնաւ կոչուած բարձր աշտարակներ կային որոնց գագաթը կը դրուէր զիակը թռչուններու ճարակ ըլլալու: Թէպէտեւ քանի մը թագաւորական գերեզմաններ կը յիշուին, օրինակի համար, Կիւրոսի մօրը գերեզմանը, անոր մօտ փոքր Ասիոյ գերեզմանները շատ յիշեցնող Կիւրոսի հօր Կամբիւս Ա. ինը. Դարեհէ վերջն է որ Պարսիկ թագաւորները, փարաւոններու նման դամբարաններ կը կառուցանեն: Այս ժողովուրդն ալ իրեն յատուկ դրոշմ ունեցող արուեստ ունեցած չէ. ամէն տեսակ շինութիւններու մէջ, Ասորեստանցաց, Լիււպացաց, Յունաց հետեւած է, մանաւանդ Կիւրոսի արշաւանքներէն ետքը:

Վերոյիշեալ ժողովուրդներուն կառուցած դամբարաններուն, ինչպէս նաեւ ամէն տեսակ շինութեանց ընծայած առաւել կամ նուազ արուեստագիտական յատկութիւնները, պիտի դան վերջապէս ծնունդ տալ այնպիսի կատարելագործեալ արուեստի մը, որուն ազդեցութիւնը մինչեւ մեր օրերուն վրայ դեռ զգալի կ'ըլլայ: Այդ արուեստը կը զարգանայ Յունաստանի ու Արշիլիզագոսի գեղածիծաղ երկնքին տակ. հոն միայն առաջին անգամ մարդկային ճաշակի նրբութիւնը անվիճելի բարձրութեամբ մը կուգայ արտայայտուիլ եւ տալ իր դրոշմը ամէն կարգի պէտքերու եւ արտադրութեանց: Այդ ժողովուրդին զլսաւոր հոգը ուրիշ բան չէ, բայց միայն կարենալ վայելել իր ամէն մէկ քայլափոխին գեղեցկին հրապոյրը. իր ազօթատեղիէն սկսեալ մինչեւ իր զուարճութեանց վայրերը, թատրոններն ու մրցումներու հրապարակները, ամէն բանէ աւելի գեղեցկին գաղափարը պիտի արթնցնեն իր մէջ: Այսպիսի միջավայրի մը մէջ ծնունդ առած գեղարուեստներու ազդեցութիւնն է որ պիտի փնտռենք հիմա, իրենց շիրմներուն մէջ. շիրմներ որ աւելի զանոնք կառուցանողներուն արուեստագիտական հանճարը կ'անմահացնեն քան իրենց պարունակած սկիւրներու յիշատակը: Բայց Յունական արուեստը որչափ ալ ինքնատիւ է, որչափ ալ ամեն յատկութիւն ունենալէ աւելի, իր տոհմային դոյնն ու ոգին կը կրէ, ամբողջ յոյն հանճարէն չէ ծնած. կարելի չէ մոտձել Վինքլէմանի հետ թէ՛ «Յունական արուեստը շատ նախնական վիճակէ մը սկսած ըլլալուն համար, պէտք է հաւատալ որ Յոյները ուրիշ ազդերէ բան մը չեն սորված, եւ իրենք են զոտած ամէն բան». այդ հարիւր տարւան վարդապետութիւնը որ մինչեւ այսօր իր զաւանդողներն ունի դեռ, բացարձակապէս անհաշտ կը մնայ արգի հնաթոսական խուզարկութեանց տուած արդիւնքին հետ: Վերջնականապէս կ'ընդունուի այսօր որ Յունաստան ալ ուղղակի Արեւելքի աշակերտած է. մանաւանդ Եգիպտոսկան ազդեցութիւնը շատ տեղ զգալի կերպով կը շեշտուի: Բայց այդ ժողովուրդին մէջ, գեղեցկին օգոյցումը միշտ այն աստիճան ամէն բանէ

աւելի բարձր է, որ քիչ ատենէն կը խեղդէ այն ամէն օտար ազդեցութիւն զոր կրած էր իր ծագմանը մէջ: Գծերու խառնուածքովը առաջ եկած այդ նուրբ ու ամենաչքեղ ձեւերու սիրահար ժողովուրդին ոգին, չկրնար երկար ատեն հաշտ մնալ Եգիպտական այդ վիթխարի ու սարսափեցուցիչ արուեստին ազդեցութեանը հետ եւ ոչ ալ այդ Բաբելական ճիւղալային արձանագործութեան, այդ կէս մարդ, կէս անասուն, թեւաւոր հսկայ զանգուածներուն: Դորիական արչաւանքէն ետքը Յոյն ոգին կ'սկսի իր տեղը գրաւել, ջնջել ամէն օտար հետքեր: արուեստը կ'սկսի ստանալ իր միջավայրին ու զինքը վարդապետ ժողովրդին խոսկական ոգին: Կը ծնի վերջապէս Յունական արուեստը: Դորիական, Յոնիական ու Կորնթական ոճերու հաստատումը կուգայ ամբողջացնել վայն, եւ կուտայ իրեն իր յատուկ գոյնը: Ուրեմն առանց երկարելու Յունական դամբարաններու նախնական կազմութեանը բացատրութիւնը, որ արդէն ուրիշ ընդարձակ ուսումնասիրութեան մը նիւթ կրնայ մատակարարել, կ'սկսինք համառօտիւ բացատրել ճարտարապետական կամ քանդակագործական այն յատկութիւնները, որ կ'երեւան իրենց ամենէն փայլուն ժամանակներուն գերեզմաններուն վրայ:

Աւելցնենք նաեւ որ յոյներուն համար գերեզմանը, յիշատակարան մը ըլլալէ զատ ուրիշ նշանակութիւն մը չունի, նշան մըն է որ կը նպաստէ կարելի եղածին չափ մեռնողին յիշատակին շարունակութեանը ընծայուած կարեւորութիւնն ալ գրեթէ բացարձակապէս գեղեցկագիտական է, թէեւ ասկից զատ կը տեսնենք որ այդ ալգին յուղարկաւորական ծէսերու պատմութիւնն ալ կարելի է մինչեւ աստիճան մը կարգաւ այդ գերեզմաններուն վրայ յորինուած քանդակներէն: Բացառաբար Յոյները ստորերկրեայ դամբարաններ կանգնած են, չատ անդամ քարէ դադակներ որ ծածկուած են կլմնտրով կամ տապանաքարով մը: Այդ տապանաքարերուն ամենէն գեղեցիկները կէս ձուածեւ, երկարածիգ կ'ըլլան, զարդարուած են սքանչելի ականթի տերեւներով, վարդաձեւերով ու դափնիներով, ասոնցմէ զատ կան նաեւ չատ մը տարբեր ձեւերով չիրիմներ, որոնց յատկութիւնը տարբեր եղած է միջավայրին ու ժամանակին հետ: Փոքր Ասիոյ կարգ մը դամբարանները ձեւով ու եւ է առնչութիւն մը չունին Ատտիկէի կամ Թրակիայի չքեղ չիրիմներուն հետ որոնք գեղեցկութեան տեսակէտով ամենէն աւելի յիշուելու արժանիներն են: Ատտիկէի չիրիմները կը բովանդակեն ստուգիւ Յունական այդ զուտ գեղեցկութիւնը: Յոյնը միւս հին ժողովուրդներուն նման չուզեր տեսնել այնքան ահւելի նոյն խոյն մահը: Գերեզմանական տըխրութիւնն իսկ պէտք է գեղեցիկ գոյներով ներկայանայ իր աչքին: չուզեր որ իր սիրելիներուն յիշատակը այդ ցուրտ սարսուռը կրել տայ իրեն, եւ իրօք ալ այն ճարտարապետութիւնն ու քանդակները որ կը

կազմեն Ատտիկեան շիրիմները, ցոյց կուտան մեզի ամէն բանէ աւելի Յունական ճաշակը: Ընդհանուր ու հին սովորութեամբ, շիրիմին վրայ կը քանդակուէր կամ կը նկարուէր ննջեցեալին դէմքը, յարակից քանդակներ շատ անգամ կը յիշեցնէին իրեն սիրելի զբաղումները. բայց այդ ներկայացուած դէմքերը ի սկզբան ննջեցեալին կենդանագրին բնու հաւատարիմ չեն. ու եւ է դէմքեր են, որ մասնաւոր անհատական տիպար մը չեն ներկայացներ. Հռովմայեցիներէ օրինակ առնելով՝ շատ վերջը կ'սկսին այդ դէմքերը ննջեցեալին զծերուն նմանցնել. իսկ այդ տապանները ամենէն աւելի կը ճոխանան, երբ կ'սկսին մեռնողին ընտանիքին սիրելի անդամներն ալ վրան ներկայացուիլ. ինչպէս Բօթօնօհի հիանալի մոհորձանը, ուր մեռնողը չրջապատուած է իր սիրելիներէն: Յոյները մահուան գաղափարին տխրութիւնը կարելի եղածին չափ նուազ զգալու գիտաւորութեամբ ջանացած են ընտրել մեռնողին զբաղումներէն ու կեանքէն՝ ամենէն հրապուրիչ տեսարանները. այսպէս՝ Աթէնքի դամբարաններուն մէջ էկեզոյի զմայլելի դերեզմանաբարը ուր Աթենացի մանկամարդուհին, ներկայացուած է իր արգուաւարդի սենեակին մէջ, ազախիններէ, գոհարեղէններու սնուկներէ չրջապատուած: Ամենէն շատ ընտրուած նիւթերէն մէկն ալ է հրաժեշտի ողջոյնը, ննջեցեալը որ վերջին անգամ մը սիրելիներուն ձեռքը կը սեղմէ: Ննջեցեալին քաղման հաւնոյեալ. այս նիւթը քիչ անգամ ներ-ներկայացուած է, մինչեւ հիմա գտնուածներէն գատնելով՝ արուեստի հրաշակերտ մը չէ արտադրած: Իսկ Ատտիկէի մէջ ամենէն աւելի նախընտրեալ ու շահեկան տեսարանը, Յուդարկաւորակաւ հացկերոյքն է: Մեռնողը ընկալմանո՞ւ է անկողնի մը վրայ, իր ընտանիքի անդամները կուգան զետեղել եւտոանի սեղանի մը վրայ կերակուրներ, սրովհետեւ ժողովրդական աւերորդապաշտ աւանդութեան մը համաձայն, կը կարծէին թէ ննջեցեալը կ'ընդունէր արդարեւ զանոնք. նոյն իսկ այս աւանդութիւնը չը յիշեցնէր այն նուիրատուութիւնները որ կ'ըլլային եղիպտոսի մէջ կրկինին: Բոլոր այս քանդակները ամենապերճ կերպով կը բացատրեն այդ ազգին գեղեցկադիտական ըմբռնումները. չիկայ կէտ մը որ պատկերին ներգաշնակութիւնը խանգարէ, չիկայ գիծ մը որ վայրկեան մը դեղեցկին տպաւորութիւնը մոռցնել տայ. պատերազմական պատկերներն իսկ անհաճոյ ազդեցութիւն մը կրել չեն տար դիտողին: Զախճախուած գանկեր, պոռթկացած աչքեր ու ասոր նման զազրելի տեսարաններ չեն որ կը ներկայանան Յունական արուեստին մէջ. սակայն, այս գեղեցիկ տիրական ձգտումին հետ, մեծ իրապաշտներ են նորէն, եւ ճշմարտին պակասը այդ գործերուն մէջ երբեք չզգացուիր. բնութեան ուղղակի ուսումնասիրութիւնը ակներեւ է միշտ, առանց սրուարուեստ չիկայ:

ՏԵԳՐԱՆ ԵՈՍՅԵՍՏՆ



ԷՏԱՌՆ ՆՐ ԺԻՒԼ ՏԸ ԿՈՆՔՈՒՌ

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա.

Եթէ իրաւ է որ զրականութիւնը գերազանց միջոցն է ժողովուրդներու կեանքն ու միտքը բարեփոխելու, Կոնքուռ եղբայրները քիչ իրաւունք ունին զրադէտ անունին: Եւ քիչ գրող իրենց չափ արհամարհանք ունեցած է արդէն ժողովուրդին համար. երբեք չեն խորհած անոր համար գրել եւ երբեք անկից ընդունելութիւն գտնել մտքերնուն չեն անցուցած. ժողովուրդը իրենց համար գեղեցիկն փակ տարր մըն է կոյր ու թանձր, եւ զրականութիւնը, ինչպէս արուեստը, զարգացածներուն ինչքն են եւ անոնց համար պարտին արտադրուիլ. իրենց համովման մէջ այնքան հաստատուած են որ առաջ կ'երթան մինչեւ ըսելու. «Ի՞նչ է գեղեցիկը: Գեղեցիկը ան է որ զգուելի կ'երեւայ չդատարարուած աչքերուն: Գեղեցիկը ան է որ քու տարփուհիդ եւ ալախինդ բնազդով սոսկալի կը գտնեն»: Եւ նոյն արհամարհանքի զգացումն է որ սա տողերը գրել կուտայ իրենց. «Վայ արուեստի այն արտադրութեանց որոնց գեղեցկութիւնը արուեստագէտներու համար է միայն: Ահաւասիկ ամենէն ապուշ խօսքերէն մէկը որ ըսած ըլլան. ա'Սլամպէտն է ըսողը: Տ'Սլամպէտն է նորէն որ իրաւունք ունի, որովհետեւ մարդկութեան մեծագոյն զրազէտներն անոնք եղած են որոնց գործին մէջ ընկերութեան բոլոր դասակարգները անունդ կրցած են գտնել. Հովերոս, Տանդէ, Շէքսպիր, Սէրվանդէս, Մօլիէր, Պալպա, Թալպոյ այնպիսի զրականութիւն մը ըրած են որուն ամբողջ գեղեցկութիւնը — եւ ինչ որ կայ այդ գեղեցկութեան մէջ ամենէն աւելի բարձր եւ նուրբ, — անշուշտ արուեստին մարդոցմէն միայն կրնայ ըմբռնուիլ, բայց որուն մէջ կայ մեծ մաս մը ամբողջ մարդկութեան համար հասկանալի. խոշոր նահապետական սեղաններն են անոնք ուր մարդկային ամբողջ ընտանիքը կրնայ նստիլ ու բան գտնել ուտելու: — Իրենք, Կոնքուռները, զրականութիւն մը ըրած են որ միմիայն արուեստագէտներուն, միմիայն փառիկաճաշակներուն համար է. եւ իրենց գործը միշտ ընտրուած դասի մը մէջ սահմանափակուած պիտի մնայ: Ասով է որ յատուկ տեղ մը կը բռնեն Ֆրանսական արդի լնապաշտ զպրօցին մէջ. Զուլա՝ մարդկային անասնութեան ու ընկերական խեղճութեանց իր հզօր զգացումովը,

Մոբասան՝ ապուլներու, ծաղրելիներու հեգնութեամբն՝ ու տեսակ մը ցաւերու ալ հասկացողութեամբը, Տոտէ՝ իր տաք խանդաղատանքովը ժողովուրդին բոլոր խաւերուն ալ լսելի ըրած են իրենց ձայնը։ Կոնքուռները, հազուապիւսին սիրողներ, իրենց փղոսկրէ աշտարակին մէջ մնացած են։ Անոնք գրազէտներ են, գրազէտի պէս գրականութիւն ընող գրազէտներ։ Կոնքուռները արուեստագէտներ են։

Բ.

Եւ սակայն իրենք են որ բնապաշտ վէպը հիմնած են իր վերջին ձեւին մէջ։ Շանֆլէտի տափակ պատմող մը եղած էր տեսնուած բաներու, Պալզաք անհուն ստեղծող մըն էր, որ դիտուածին վրայ հնարուածը, գուշակուածը աւելցուցած է։ Ֆլուպէս մտածող մը եւ քնարերգակ մըն է որ դիպուածով, ապուլներու դէմ՝ իր ատելութիւնը յագեցնելու համար, գրած է Տիկիւն Պոլիսիւն, որ բուն նախատիպարն եղաւ բնապաշտ վէպին։ Կոնքուռներն են որ առաջին անգամ, իրենց ըրածին կատարեալ գիտակցութեամբ, վէպէն վերուցին հնարքն եւ ստեղծագործութիւնը եւ զայն դարձուցին զուտ ուսումնասիրութիւն մը, «Ժամանակակից կեանքի պատմութիւն մը. իրենք սկսան այն վէպը «որուն մէջ բան մը չպատահիր», որ իր ընթացքով կը նմանի կեանքի կցկուտը, ցրուած եւ անկապակից ընթացքին, եւ իրենք սկսան նօթերու վրայէն վէպ գրելու եղանակը։ Եւ, Մոբասանէն զատ՝ որ միշտ Ֆլուպէսին աշակերտ մնացած է, բոլոր միւս գրազէտները Կոնքուռներէն ազդուած են աւելի կամ նուազ. անոնցմէ կը սերին Զոլա, Տոտէ, եւ մանաւանդ Հիւլիզմանո, եւ ասոնցմէ յետոյ եկող աւելի նոր շատ վիպասաններ։

Բայց, մօտէն քննելով այն ճամբան որով Կոնքուռները հասած են այս ուղղութիւնը գտնելու, կը տեսնենք որ գրական ճամբայ մը չէ եղած անիկա։ Կոնքուռները եկած էին ռոմանդիկ դպրոցին վերջերը, երբ գրականութիւնն ու դեղարուեստը իրարու շատ մօտեցած, գրեթէ իրարու խառնուած էին, երբ Տըլաքուտա գրական ոգիով լեցուն նկարչութիւն մը կ'ընէր եւ Թէոֆիլ Կոքիէ նկարչի աչք մը կը բերէր գրականութեան մէջ։ Կոնքուռները ծնած եւ ապրած են դեղարուեստի մթնոլորտի մը մէջ. իրենց մայրը արուեստի աւարկաներ հաւաքելու սէր ունեցող կին մըն էր, եւ իրենց տուաւ կանուխէն դեղարուեստի, մանաւանդ նուրբ, ընտրուած, հազուադիւս դեղարուեստի համար հակում մը. նկարչութիւն ընելով սկսած են, եւ ժիւլ տը Կոնքուռ նկարչի ճշմարիտ տաղանդը ցուցուցած է իր ջրաներկներուն ու գծագրութեանց մէջ։ Դրողներուն մէջ Թէոֆիլ Կոքիէին գրելու եղանակն է որ ամենէն աւելի կը սիրէին։ Երկու եղբայր մտածեցին Ֆրանսայի մէջ պոյոյտ մը

ընել եւ զեղեցիկ վայրերն ուրուանկարել. հետեւինն ունէին տեսարակ մըն ալ ուր իրենց ուղեւորութեան տպաւորութիւնները կը զրէին. «այդ ճամբորդութեան յուշատետրն է, կը զրէ Էտմոն տը Կոնքուա, որ մեզ նկարչութենէն սուա եւ գրագէտ ըրաւ: Բայց այդ ճամբորդութեան տպաւորութիւնները նկարչի եւ նկարչութեան տպաւորութիւններ էին, նկարչի լեզուով գրուած. եւ ատիկա միշտ իրենց բնական ուղղութիւնը եղաւ գրականութեան մէջ: Իրենց նկարչութեան մասնադիտական հըմ-տութիւնը զիրենք կարող ըրաւ բոլոր երանգներով նկարագրելու ո եւ է տեսարան կամ պատկեր, եւ յետոյ կարող ըրաւ զիրենք գեղարուեստի քննադատութիւնն ընելու ոչ թէ խորհողի պէս՝ ինչպէս Լէսինկ, Տիտուօ կամ Թէն, ոչ թէ բանաստեղծի պէս՝ ինչպէս Բօլ տը Սէն-Վիքթուր, այլ արհեստի մարդու պէս, — նկարչութեան վրայ խօսելով նկարչի պէս:

Բայց իրենց գրականութիւնը տարբեր եղաւ Թէոֆիլ Կոդիէինէն, որ սակայն ան ալ նկարչի գրականութիւն էր. Կոդիէի գործը անկերջ նկարագրութիւն մըն է, — ուղեւորութեան պատկերներ, պատմական պատկերներ, քամիւն պատմութիւններ, ժամանակակից վէպեր, — տոտնց հոգեբանութեան ջանքի, եւ առանց ո եւ է փիլիսոփայութեան: Կոնքուաները կրեցին աղբեցութիւն մը որ իրենց գործին հիմնաքարն եղաւ. այդ աղբեցութիւնն ալ կուգար նկարչութենէն, — բայց այնպիսի նկարչութեան դէմքէ մը որ որ գերազանցապէս գրական է, Կալմունիէն: Կալմունի այն հրաշալի գծագրիչն էր որ իր էջերուն մէջ արդի կեանքն սկսաւ սեւեռել, ինչ որ անիկա ունի ամենէն աւելի իրեն յատուկ, նոր, մասնաւոր, յիմար, հիւանդ, ու սիրուն եւ բացատրել գայն իր ամբողջ հոգեբանութեամբ, — գծագրութիւն մը որ արդէն բնագաւառ վէպն էր: Կալմունի իրենց սորվեցուց բարքերուն ներքեւոյքը պրպտել, մարդերուն ներքը քննել, եւ մասնաւորապէս լուրիւն, ժամանակակիցը ուսումնասիրել, օրուան ողին արտայայտել: Այդ ուղղութեան մէջ աւելի ամբացան կարգաւով Պալգաքի վէպերը, ամբողջ բարախուն արդի կեանքով: Եւ ահաւասիկ ինչ որ եղաւ իրենց գրականութիւնը, — հոգեբանի եւ նկարչի ուսումնասիրութիւն մը, եւ ճշգրիտ պատմութիւն մը ժամանակակից կեանքի: Ժամանակակիցին, արդիին սէրը իրենց սկզբունք ըրին, դրօշ ըրին իրենց. արդիին սէրն է որ զիրենք կատաղի թշնամի ըրաւ հնամոնեան, պայմանադրականներուն, եւ որ զիրենք արգիլեց ո եւ է ընդունուած վարպետի հետեւեցէ:

«Արդին, հասկցա՞ր, արդի՞ն, ուրիշ բան չի կայ, կը զրեն Մանեղ Սալունուն մէջ: Արդի՞ն, ամեն բան հոն է: Զգայութիւնը, ներքնատեսութիւնը ժամանակակիցին, ձեզ արմիցող տեսարանին, այն ներկային որուն մէջ ձեր կրքերուն եւ ձենէ բանի մը դողգողը կը

զգաք... ատ է կարեւորը՝ արուեստագէտի մը համար: Եւ արդէն այդ սէրն է որ նոյն իսկ նախորդ դարծերու մէջ իրենց սիրել պիտի տայ ինչ որ կը մօտենայ արդիին, Լուկիանոսը, Ռամպարանդը, Վինչին, կամ ինչ որ հին դարծերուն մէջ յատկանշական է, հազուադիւտ է, իր ատենին նորն ու արդին է, — Բոխմիդիֆները, Ժ.Բ. դարու արուեստը, ճաբոնի արուեստը, — եւ նոր ժամանակի արուեստին մէջ՝ ինչ որ ամենէն աւելի արդի ոգին կ'արտայայտէ, — Հայնէն, Էտկար Բօն, Պալլաքը, Կալանդին: Իրենցմէ կը սկսի ինչ որ արդիապաշտութիւն (modernisme) կոչուեցաւ:

Գ.

Պարզ ուսումնասիրութիւններով սկսած են: Նկարչութեան ցուցահանդէսի քննատաղութիւններ, թատրոնի կեանքի պատկերներ, ապրուած կեանքի կամ վերարտադրուած կեանքի տալանդութիւններ են, ամենքն ալ գեղարուեստի ոլորտի մը մէջ դառնալով: Կեանքի ինչպէս գեղարուեստի մէջ, իրենց ճաշակները միշտ հակած են՝ ո՛չ հանդարտ եւ հզօր ներդաշնակութեան մը, ո՛չ մեծ ու պայծառ գեղեցկին, այլ արուեստագէտի կեանքին տենդոտ անկարգութեան, ու նուրբ, իսկատիպ, սիրուն արուեստին: Այդ սիրունի, նուրբի հակումն է որ իրենց սիրելի ըրաւ Ժ.Բ. դարու ֆրանսական արուեստը, այնչափ գոգոտիկ, այնչափ նրբին ու շնորհալի. այդ արուեստին համար իրենց համակրութիւնը զիրենք մըլեց մօտէն ճանչնալու դարն ոչր այդ արուեստը փթթած էր. եւ սկսան ուսումնասիրել զայն իր բարքերուն, իր դէպքերուն եւ իր դէմքերուն մէջ. Այս միջոցին է որ հրատարակեցին իրենց պատկերները Ժ.Բ. դարու կեանքէն եւ արուեստէն, Պասմուքիւն փրանսական ընկերութեան Ժ.Բ. դարու վերջը, Սոֆի Առնու (Ժ.Բ. դարու դերասանուհի մը), Կենդանագրեր Ժ.Բ. դարէն, Պասմուքիւն Մառի-Անդուանէի, Ժ.Բ. դարու արուեստը, Լուի Ժ.Բ.ի սարփունիները, Տիկին Տը Բոմբասուռ, Լա Տիւպաուի, Կիւնը Ժ.Բ. դարու մեջ: Քառլայի մը կամ Միշլէի մը յատկութիւնները չեն որ կ'երեւան այս գործերուն մէջ. Կոնքուռները փիլիսոփայի միտք չունին, մարդկային պատմութեան այդ շրջանը բացատրած ատեննին մեծ համայնապատկերներով չեն ներկայացուցած զայն, ընկերական իմաստասիրութեան լայն տեսութեամբ մը զայն լուսաւորելու չեն նկրտած. իրենց նպատակը այդ չէ. այդ իմաստասիրութեան ու ընկերականութեան տեսակէտով այնչափ կարեւոր դարուն մէջ, արդէն, մտքին եւ քաղաքականութեան վրայ չէ որ իրենց ուսումնասիրութիւնը կեղծոնացուցած են. աւելի նոր եւ աւելի սիրուն գործ մը ըրած են, այդ մեծ դարուն պզտիկ կողմերը. եւ ներքին

կողմերը երեւան հանած են, անոր բարքերը նկարագրած են, եւ զլիսաւորապէս ջանացած են ցուցնել այն դերը զոր կինը խաղացած է այդ դարուն մէջ. պատմութեան մէջ նորութիւն մըն էր ասիկա, քաղաքական մեծ դէպքերուն տակ սովորական կեանքը ցոյց տալ, պատմութիւնը իրապաշտ վէպի վերածել: Արուեստագէտի դործ, բայց խորհողի ալ դործ, որովհետեւ հեղինակները շատ սրամտութեամբ ցուցուցած են թէ ընկերական պատմութեան մէջ պզտիկ բաները սրճափ ազդեցութիւն ունին մեծ բաներուն վրայ, թէ շատ անգամ կնկան խնդիրներն են որ պատմական խոշոր դէպքերը կը ծնին: Խորհողներ սակայն՝ որոնք ընդհանուր գաղափարներ չունին, ինչպէս Ռընան ըսած էր անոնց համար. իրենց մտածումը զգայութեանն, համ դիտողութեանն կուգայ ուղղակի, կարճ, մասնական է, աւելի սրամտութիւն կամ մտքի իսկատիւլ խաղ մըն է քան խորունկ տեսողութիւն մը իրերուն մէջ. ասոր ապացոյցը կը գտնենք մանաւանդ այն հատորներուն մէջ ուր ուզած են զուտ մտածումներ դնել, ինչպէս Գաղափարներ եւ Զգայութիւններուն մէջ. մտածումները հնարամիտ ձեւով արտայայտուած դիտողութիւններ են, որոնք իսկ Ռոշֆուրդի մը կամ Մարկոս-Աւրելիոսի մը ներքին հոգեբանութիւնը չունին, արտաքին են դրեթէ միշտ, կամ ծայրայեղ, բազերու իսկատիւլ զուգադրութիւն մը յաճախ: Այդ մեծ ու խոր մտածման պակասը իրենց ամբողջ դործին մէջ կը զգացուի: Կոնքուսները մարդկային կեանքի մեծ պատկերահաններ եղած պիտի չլլան, այլ անբաղդատելի կենդանագործներ, եւ զմայլելի մանրանկարիչներ. իրենց պատմական մենագրութիւններէն ընկերական մեծ գաղափար մը չելեր. սպորուած կեանքի պզտիկ կտորներ աւած են, զանոնք ջանացած են դիտական հետազոտումով մը ճանչնալ իր ամբողջ ճշդութեամբ, զանոնք հասկցած են իրենց արուեստագէտի ու բանաստեղծի հոգիովը, եւ արտայայտած են զանոնք վարպետի ձեւով մը: Այդ պատմական ուսումնասիրութիւնները ամենէն սիրուն եւ կատարեալ գրական կենդանագիրներն են Փրանսական լեզուին, եւ իրենց հոգեբանութեան ճշգրտութեամբ, արուեստի շնորհով ու փափկութեամբ՝ հաւասար Քանդէն Տը Լադուռի անմահ քաղաքներուն:

Կենդանագրեր, մենագրութիւններ են իրենց վէպերն ալ: Պատմական պատկերներէն այդ վէպերուն անցքը շատ բնական է. նոյն եղանակին է տեսնելու եւ աշխատելու. եւ նոյն դործն է որ շարունակած են մեռած կեանքէ մը անցնելով իրենց սիրած արդի կեանքին, որուն պիտի դային ուշ կամ կանուխ եւ ուր պիտի գտնէին իրենց մտքին բուն արտայայտութիւնը. «Պատմութիւնը, կը դրնի արդէն, վէպ մըն է որ տեղի ունեցած է. վէպը պատմութիւն է որ կրնայ տեղի ունենալ»: Եւ իրենց վէպը «պատմութիւն» է. պատմութիւնն է այս դարուն վերջին.

կէսին: Պէտք չէ նորէն լինուել հոն տիրող դաշաւար մը. Պալլաքի անհուն գործէն կ'անջատուի խմստասիրութիւն մը որ հիացում մըն է մարդկային անձնուիրութիւններուն, արգահատանք՝ դժբաղդութիւններու, եւ ոխերիմ առեւտրութիւն՝ եռականութեան դէմ. Զըպէնի գործէն հեգնութիւն մը կ'ելլէ մարդկային տխմարութեան երեսն ի վեր. Զոլայի գործէն տխրութիւն մը՝ կրքերու մէջ թանձրացած մարդկութեան համար. Կոնքուռներու գործէն ու եւ է որոշ խմստասիրութիւն չարտաշնչուիր: Հատուածական պատմութիւն մըն է ժամանակակից Փրանսական ընկերութեան քանի մը մասնաւոր շրջանակներուն. կենդանադիրն է քանի մը հոգեկան վիճակներու եւ քանի մը տխարներու որոնք այս դարու վերջին կէսին կը վերադարձին: Հաւաքական պատկերներ չեն արգէն ինչպէս Պալլաքի մեծ վէպերը, մարդկային զանգուածներ չեն երերար հոն ինչպէս Զոլայի վէպերուն մէջ. քանի մը որոշ միջավայրներ են, եւ քանի մը տխարներ. անոնք ալ շատ բացառական, շատ մասնաւոր, եւ արդի կեանքին յատուկ: Այդ վէպերուն մէջ, միակ կապը զոր կարելի է գտնել, այն նոյն ճգնումն է որով ընտրուած են այդ նկարագրուած հոգեկան վիճակներն որոնք զրեթէ նոյն են միշտ. այդ հոգեկան վիճակները հոգիի անկումներ են մեր դարուն ամենէն ահեղ հիւանդութեան, կա՛քի հիւանդութեան կրծումին տակ: Կոնքուռներու վրայ իր հոյակապ ուսումնասիրութեան մէջ, Պուռօ է բացատրած է թէ ինչպէս, ստացուած ծանօթութեանց եւ դաշաւարներու զէլին տակ՝ արդի մարդկութեան հոգիին կտրոնցուցած է իր առողջ անձնակալանութիւնը, թէ այլապէս խմստասիրութեանց ուսումնասիրութիւնը, շատ մը ետեւու մուտքը արդի մարդուն հոգիին մէջ՝ անոր եսին տուած է թոյլ ծածանուտութիւն մը, որ յանգած է որոշ նկարագրի պակասին, կամքի ջլատման, ջլախտին: «Մտածման տժգոյն երանգէն, կ'ըսէր Շէքսպիր իր Համլէթին բերձով, վճռականութեան բնական ծագիկը կը թօշնի»: Մտքի կեանքին ծայրայեղ կշռումն արդի մարդուն մէջ, անոր հաւատարմակալութիւնը կտրոնցնել տուած է, անոր գործելու կարողութիւնը թուլցուցած է եւ անոր մէջ վարանումը, անորոշութիւնը զրած է, որ քայքայումին կը տանի: Այս վիճակն է որ Կոնքուռներն արտայայտած են. «Մտածեցէք, կը զրեն իրենք իսկ նամակի մը մէջ, որ մեր ամբողջ գործը ջլային հիւանդութեան վրայ կը յենու»: Այդ հիւանդութիւնը իրենք ալ զգացած են, իրենք ալ անոր զօհերն են, եւ անոր համար է որ իրենց դրականութիւնը հիւանդ, անհաւատարմակալ է: «Այդ հիւանդութեան նկարագրութիւնը մեր հոգիին քաղած ենք», կը զրեն: Եւ Գաղափարներ ու Զգայութիւններուն մէջ, արդի գրական մարդուն չարհարանքը բացատրելու համար, կ'ըսեն. «Ինքզինքը շատ ուսումնասիրելով, կարծրանալու տեղ, մարդ տեսակ մը բարոյական եւ

զգայնիկ մտքագերծ կը դառնայ, ամենափոքր տպաւորութենէ մը վիրաւորուած, առանց պաշտպանութեան, առանց մորթի, արիւնոտ համակ: Եւ իրաւ, իրենց վէպերուն մէջ կը զգացուի հեղինակներուն տառապանքը որ իրենց տուն տուած է այն ահռելի ուսումնասիրութիւնները հոգիի աստիճանական քայքայումներուն: Ու իրենցմէ մէկը, Ժիւլը, մեռած է չկարենալով դիմանալ հիւանդութեան, որ աւելի կը սաստկանար այդ ցաւագին ինքնուսումնասիրութեամբ: Իրենց հոգին նկարագրած են բոլոր այն հիւանդ տիպարներուն մէջ զոր կը տեսնենք, պայմաններով իրարմէ տարբեր, հիւանդութեամբ եղբայր իրարու: Շառլ Տըմայէիին մէջ կ'երեւայ, զրական մարդոց չըջանակի մը ուսումնասիրութեան հետ, վերլուծող գրագէտի մը տիպարը, որ թեթեւ ու չար կնոջ մը քանդող ազդեցութեան տակ կ'ընկճուի, իր կամքն ու իմացացականութիւնը կը կորսնցնէ եւ կը յիմարանայ: Մանկո Սալոմոնիին մէջ, նկարիչ մըն է որ մոլորեցնող տարփուհիի մը ձեռքը կը թունայ, կը ստորնանայ, վատ ու անզգայ էակ մը կը դառնայ: Ռընէ Մոքըրոհէիին մէջ խիզախ, համարձակ ու զգայուն ազջիկ մըն է որ կ'ուզէ արդիւնէ իր եղբայրը հարուստ ամուսնութիւն մը յաջողցնելու համար իր հօրը անունը ձգելու անագնիւ գաղափարէն, անոր դժբաղդութեան եւ մահուան պատճառ կ'ըլլայ, եւ սրտին ցաւէն կը մեռնի: Ժեռոմէի լա-սեռոդէօ գեղացի ազջիկ մըն է որ Բարիզ կուգայ եւ շատ կանուխ զլսէ կ'ելլէ, յետոյ տարւոք ու բարի կնոջ մը քով սպասուհի կ'ըլլայ, տասնհինգ տարի խելօք ապրելէ յետոյ, սէր մը կ'ունենայ, կը լքուի, եւ, արդէն մարմնով հիւանդ, արդանդային, յետին անկումներու մէջ կը թաւալի իր յուսահատութենէն, մինչեւ որ իր կեանքէն կը փտտի ու կը մեռնի: Քոյր Ֆիլոմէիին մէջ, որ իրենց ամենէն փափուկ գիրքն է եւ այն ուր աւելի իրենց սիրտը խօսած է քան իրենց ջիղերը, մարապետ մըն է որ հիւանդանոցի մը մէջ բժշկութեան հիւանդ ուսանողի մը վրայ կը հսկէ, թաղուն սէր մը կ'ունենայ անոր համար, միշտ գաղտնի կը պահէ զայն, եւ կը տառապի երբ անոր ոգեւարն ու մահը կը տեսնէ: Վերջապէս, Տիկին Ժեռվեզիին մէջ, իրենց հրաշակերտը թերեւս, զարգացած մտքով, իմաստասիրութեամբ սնած կին մըն է որ, հիւանդ, Հռոմ կ'երթայ. հոն, քաղաքին կրօնական չէնքերն ու յիշատակները, իր զաւկին հիւանդութիւնն եւ ալօթքներէ յետոյ պատահմամբ բուժումը, քանի մը կրօնամուկ անձերու ազդեցութիւնը զինքը յանկարծ կերպարանափոխ կ'ընեն, ազատ մտածունքը կը մեռցնեն իր մէջ, զինքը կրօնամուկ կը դարցնեն, այն աստիճան որ յուզմունքէն մեռած կ'լինայ Պապին օրհնութեան տակ: — Կը տեսնուի որ վեց վէպերն ալ գրեթէ նոյն նիւթը ունին, կամքի հիւանդութիւնը. եւ բոլոր այդ ցաւատանջ պատմութիւններն այն ատեն միայն կարելի է ըմբռնել երբ

անդամ մը համոզուի մարդ թէ հիւանդի հոգեբանութիւն է. առանց ատոր՝ շատ մը տարօրինակութիւններ, անբնականութիւններ, պակասներ պիտի տեսնուին տիպարներուն հոգեբանութեան մէջ. ժէւովնիին վերջին անկումը կրնայ զարմացնել տասնհինգ տարուան հանգարտութենէ յետոյ, ինչպէս Տիկին Ժէւովեզէին կոյր կրօնամուլութիւնը՝ այդ ազատախոհ ու հաւասարակշիւ մտքին մէջ. լայց ատոնք ամենքն ալ ջլախտաւորներ են, հիւանդ զգայնութեամբ էակներ, տարականոն կազմուածքներ, որոնց մէջ հիւանդութիւնը թաքուն է եւ այդ դէպքերու պատրուակին կը սպասէ երեւան ելլելու համար: Այդ կերպով ըմբռնուելով, Կոնքուաներու վէպերը հրաշալի կտորներ են ակտաբանական գրականութեան: Եւ ինչ որ այդ գրականութիւնը շահեկան կ'ընէ, այն է որ այդ հիւանդութեան պարագաները չեն նկարագրուած սուղջ մտքէ մը որ դրսէն կը նայի, կը թափանցէ եւ կը հասկնայ, Շէքսպիրի մը պէս որ ահեղ հիւանդութիւններ ու տկարութիւններ ցուցուցած է ամենէն առողջ, ամենէն հաւասարակշիւ արուեստով սովորն. հոս, նկարագրողն ալ հիւանդ է, զործն ալ հիւանդ է, սճն ալ հիւանդ է. արդ, հիւանդ մը իր ակտին շատ մը թաքուն, ներքին, անձանթ մանրամասնութիւնները գիտէ եւ կրնայ զրուցել, բայց չկրնար ամբողջական պատկերի մը մէջ ցուցնել իր ակտը. ճիշդ ատոր համար է որ Կոնքուաներուն արուեստը, ինք ալ հիւանդ, պակասաւոր է. եւ իրենց հոգեբանութիւնը՝ բայց տեղեր սննի, անկաստար է, եւ սակայն աւելի արիւնոտ, բարախուն, — հիւանդի խոստովանութեան մը պէս:

Դ.

Այս հիւանդի գերասուր զգայնութեան վրայ, որ իրենց՝ հոգիի ծիւրախտները սլաղմել կուտայ, եւ այն գեղարուեստով նրբացած տեսողութեան վրայ որ վրձինի պէս կենդանի, գունաւոր ու նրբին գործիք մը կուտայ իրենց՝ արտայայտութեան, աւելցուցէք մեծ քանակութեամբ սրամտութիւն, ամենէն վաւելուն, ամենէն բարիզեան սրամտութենէն, սրամտութիւն որ, ինչպէս Լըմէղու կը գրէ, երեւակայութեան ծաղիկ մըն է քան մտածման: Աւելցուցէք մանաւանդ զմայլելի տարր մը լանաստեղծութեան, անհունապէս նուրբ զգացում մը տարօրինակին, ցնորականին, հիւանդին՝ գեղեցկութեան, որ իրենց սիրել կուտայ ճաբոնի քմածին ու փափուկ արուեստը, էտկար Բօն եւ մանաւանդ Հայնէն, այն լանաստեղծը զգայնոտ դիտողութեան, հեղնական մեղամաղձութեան, օղային քմայքի, քանդակուած երեւակայութեան: Բօն ուսած են արհաւիրքը, ցնորքը, երազը գիտական ճշդութեամբ պատմել. տեսէք իրենց երազի սեւեռումները, կամ գինով մտքին մոլորմանց վեր-

լուծումները : Հայնէէն առած են թեթեւ , տրամօրէն ժպտող քնարեր-
գութիւն մը որ երբեմն իրենց էջերուն մէջ կը թեւաբախէ , որ Զգայու-
թիւններ եւ Գաղափարներուն մէջ իրենց հծծել կուտայ մէկ քանին այն
արձակ բանաստեղծութիւններէն որոնք Ֆրանսական գրականութեան
մէջ նորութիւններ են զգայնութեան եւ լեզուի . եւ որ մանաւանդ ա-
ւելի կը շեշտուի էտմոն տը Կոնքուռի՝ իր եղբօր մահէն յետոյ՝ մինակ
գրած վէպերուն , ինչպէս Զեմկանօ եղբայրներուն , Լա Ֆոսիէին , Շե-
ռիին մէջ : Այդ բանաստեղծի հոգին է որ իրենց ոճը կ'արգիլէ զուտ
նկարչութիւն ըլլալէ , երազանք մը եւ երգ մը կը դնէ անոր մէջ , եւ ան
է որ բնութեան պատկերները մասնաւոր աչքով մը տեսնել կուտայ ի-
րենց , մասնաւոր մեկնութեամբ մը կը լուսաւորէ զանոնք :

Կ'ըմբռնէք որ այսքան կնճռոտ կազմուածքով մտքի մը արտայտու-
թեան ձեւը պիտի ըլլայ արտասովոր , խառն , եւ շատ խակաւորալ : Աշխա-
տելու եղանակը , իրենց մէջ , այնչափ տարօրինակ է , այնչափ հիւանդ է
որչափ իրենց արուեստը , եւ արուեստական , դժուարին , տաժանագին .
նախ , երկու հոգիի միահաղոյն աշխատութիւնն է , ուր ժիւլ իր աւելի
արուեստագէտ մտքին գոյնը , կրակը եւ անակնկալը գրած է , եւ
էտմոն իր աւելի գրագէտ կազմուածքին դիտողութիւնը , մտածումը
եւ կանոնաւորութիւնը : Այս երկու եղբօր ամբողջ կեանքի աշխատուի-
ցութիւնը գրական պատմութեան ամենէն սրտաշարժ էջերէն կ'ընէ
Կոնքուռներու պատմութիւնը , մանաւանդ որ այս երկուքը , մտքով ինչպէս
արիւնով եղբայր , իրարմով միայն զիրար ամբողջ զգացած են , իրարու
համար ունեցած են սէր մը որ ինքզինքը սիրելու կը նմանի , եւ որոնց-
մէ մէկը՝ էտմոնը՝ ինքզինքը կիսատուած զգացած է միւսին մահովը
(կարգալ այս մասին՝ էտմոն տը Կոնքուռին զմայլելի Զեմկանօ եղբայր-
ները ուր երկու քլօուն եղբայրներու պատմութեան մէջ իրենց ցաւագին
ու խակաւորալ եղբայրութեան հոգեբանութիւնն արտայայտուած է) :
Բայց այդ երկու մտքի ձուլումը անբնական բան մըն ալ ունի , երկու
կողմէ զոհողութիւններ կ'ենթադրէ , ջանք մը նոյն անձնականութիւն-
թիւնն ունենալու կամ գտնելու միջին մը ուր երկու անձնականութիւն-
ներն իրար խառնուին : Յետոյ , իրենց աշխատութիւնը յուզուած հոգիէն
բնականօրէն փրթած գործը չէ , ոչ իսկ դիզուած նօթերէն կանոնաւո-
րապէս ելած գործը : Ահռելի չարչարանք մըն է ինքիրմէ փրցնելու ,
կտոր կտոր , մտածումը եւ անոր ձեւը : Ֆրալէուէն , Կոդիէէն յետոյ ,
գրագէտը ստիպուած էր զգայութիւնն իր վերջին ճշդութեամբ որոշե-
լու եւ զայն ամբողջապէս բացատրող բառը գտնելու : Կոնքուռները
զգայութեանց արձանագրութեան արուեստը աւելի առաջ տարին ,
աննշմարելի նրբութիւններն ալ ջանալով արտայայտել , մանաւանդ որ
աւելի դժուարին զգայութիւններ ունէին բացատրելու , այն է հիւանդ ,

տարտամ, խուսափուկ զգայութիւններ: Իրենց համար գրեթե աշխատութիւնը «ցնորատեսական ուժով տենդն է» (la forte fièvre hallucinatoire): «Ամէն օր, կը գրեն իրենց Օրագրին մէջ, (որ այս դարուն ամենէն եղական գործերէն է, օրուան դէպքերուն եւ անձերուն անմիջական տպաւորութեան տակ գրուած էջերու անհուն շարք մը, ԺԹ դարու ժամանակակից պատմութիւն մը օր առ օր գրուած) երբ կը նստիմ աշխատութեան սեղանիս առջեւ, կ'ըսեմ՝ «Ուղեղէս զլուխ մըն ալ փրցնելու է», ցաւագին զգացումն ունիմ այն մարդուն որմէ գային ամեն օր քիչ մը իր արիւնէն ուզէին՝ ուրիշի մը երականերուն մէջ անցընելու համար»: Այս տաժանքով պատրաստուած գրականութիւնը չունենար անշուշտ այն յուզման լայն փոխանցականութիւնը զոր զգացման մը շեղումին՝ մէջ գրուած գործերն ունին. բայց հազուադէպի, դժուարի եւ նուրբի արժէք մը կ'ունենայ, որ հրապոյր մըն է, եւ շատ թանկագին, եւ որ նրբաճաշակներուն միայն սիրելի կ'ընէ զայն: Այդ հիւանդի եւ նրբամիտ տառապանքէն երկայն գործեր չեն կրնար ելլել, ոչ ալ լայն շունչով մեծ կտորներ, ընդարձակ ընդլայնումով հատուածներ. պզտիկ պզտիկ զուտներ են որ իրենց վէպերը կը կազմեն, իւրաքանչիւրը մեծ խոնջէնքէ մը ելած, իւրաքանչիւրը տենդի մը սարսուռն ունենալով, չափազանց նուրբ, ու յոքնեցուցիչ: Եւ այդ քիմիագէտի պատրաստութեան արդիւնքն է իրենց ոճը, քիմիագէտի մը որ իր անձին էն տաք, էն արիւնոտ մասէն կը քաղէ նիւթերը՝ այն տարօրինակ մարմինը կազմելու համար որ իրենց սճն է: Այդ ոճը կերպարանափոխած է ֆրանսական լեզուն. քերականութիւնը յեղաշրջուած է հոն, բառերը նոր իմաստ մը առած են, բառերու տարօրինակ զուգադրութիւններով մտածման ու տպաւորութեան ամենէն անակնկալ խուսափումները բացատրուած են, այդ ոճը կարող եղած է արտայայտել ինչ որ նկարչութիւնը կրնայ՝ իր երանգապնակով, եւ արտայայտել նաեւ ինչ որ ջիւերը զգայութիւն կը ծնին մարմինին մէջ, գոյնը եւ անոր բոլոր երանգները, զգայութիւնը եւ անոր բոլոր ճիւղաւորումներն, եւ անոնց ստուերն ալ: «Տեսանելի, գրեթէ չօշտիելի ընելու համար մարդկային անասունին արտաքինը՝ այն միջավայրին մէջ ուր կը շարժի, կը գրէ Հիւիզմանս, անոր կրքերուն մեքենավարումը ցուցնելու, անոր մտածումներուն ընթացքներն ու դադարները, անոր անձնութիւններուն խոտորումը, անոր մոլութեանց բնական փթիթումը բացատրելու, անոր զգայութեանց ամենէն խուսափուկը արտայայտելու համար, Ժիւլ եւ Էտիենն տը Կոնքուռ պարտաւորեցան դարձնել հատու եւ հզօր գործիք մը, նոր գոյներով երանգապնակ մը, խկատիպ բառարան մը, նոր լեզու մը:» Այսօր, այդ ոճը ամենուրեք եղած է, ամէն անոնց որոնք խկատիպ գէմքերն են ֆրանսական արդի գրականութեան: Եւ այդ ոճը, ուր անսովորը, հազուադէպը, մանրը

ունին մեծագոյն կարեւորութիւն, ճիշդ հակառակն է դասական ոճին, ինչպէս այս նկարագրելու եղանակը՝ դասական եղանակէն: Հին վարպետներուն մէջ, նկարագրութիւնը ընդհանուր գծերուն մէջ կը ցուցնէ առարկան, տեսարանը կամ հոգեկան վիճակը, անոր ամբողջութեան տպաւորութիւնը կուտայ՝ էական տարրերը միայն առնելով. ատիկա մեծ արուեստն է: Հոմերի, Տանդէի, Կէօթէի, Շէքսպիրի, բոլոր կատարեալ հանճարներուն, եւ այդ արուեստն է՝ որ ունեցած են նոր վէպին մէջ, Փլուպէո եւ Մորասան ալ. Կոնքուռները մեծ կարեւորութիւնը մանրամասնութեան կուտան, եւ մանրամասնութեանց մէջէն կ'ընտրեն ամենէն տանջմարեկին, ամենէն նուրբը, ամենէն դժուար արտայայտելին, եւ զայն կը դնեն լոյսի մէջ:

Տեսէք, օրինակի համար, Տիկին Ժեռլիգիի սա հատուածը, ուր հեղինակները կը ցուցնեն, յաջողութեամբ մը սրուն նկարչութիւնն ալ անկարող է, պանդուխտի մէջ լսակի վրայ նայող պատուհանէ մը քուռակուսի պարապին տպաւորութիւնը. «Պատուհանին տակ, բակ մը կար, ծակ մը, հոր մը, լայց լոյսի հոր մը՝ ինչպէս կը ձեւացնէ: հոն արեւը շեշտ իյնալով չորս պնտի մէջ: Ու խորը, դիւթութեան դոյն պղտիկ պարտէզ մը, ուր պտուղները սակի պտուղներու կը նմանին, ուր ջուրը ագամանդի ու շափիւղայի կարծես հեղուկ փռչի մը կը դնէր այն տենկալեան հուրի նշոյլներուն մէջէն զոր իրարու կը ցոլացնէին իտալական ոճով ներկուած կոշտ կապոյտ սլաութերը: Հարստին ուրախութիւնը կը սահէր ու կը խաղար տերեւներուն փայլունին, ծաղիկներուն փաղփուամին վրայ, կը բզկար լուծեան եւ տաքութեան մէջ, եւ ճանճի թռիչներ, մերթ ձերժակ՝ կանանչին վրայ եւ մերթ սեւ՝ ճերմակին վրայ, օդին մէջ իրարու կը խառնուէին, կամ կ'ախ կը մնային, թեւերն աննշմարելի կերպով ստրուագին, ինչպէս երջանկութեան հիւլէներ մթնոլորտին մէջ առկախուած»:

Ո՞վ կրցած է երբէք նկարագրութիւնը հասցնել այս նրբութեան եւ այս յուսահատեցուցիչ ճշդութեան, զայն ընելով ամենէն գիտականը, եւ միանգամայն՝ տեսնելու եղանակին իսկատպութեամբ՝ ամենէն բանաստեղծականը:

Ե.

Ի՞նչ պիտի ըսէր Լէսինկ, եթէ դար հիմա այս գրականութիւնը տեսնէր, այս ոճը տեսնէր, ինք որ իր Լաոֆոնին մէջ կը բացատրէ թէ բանաստեղծութիւնը պէտք չէ որ նկարչութեան սահմանազուլան անցնի, եւ որ կ'ըսէ. «Ձեռ կարծեր որ լեզուն՝ իբր բանաստեղծութեան գործիք՝ ունենայ այդ կարողութիւնը (նիւթական աւարկաներ նկարա-

գրելու), որովհետեւ այդ բառերով նկարագրութիւնները իրականին պատրանքը չունին, ինչ որ բանաստեղծութեան գլխաւոր յատկանիշն է. այդ պատրանքը պէտք է որ պակսի անոնց, վասն զի մարմնին մասերուն համագոյութեան նկարագիրը հոն հակասութեան մէջ է լեզուին յաջորդականութեան նկարագրին հետ, եւ մինչդեռ առաջինը երկրորդին մէջ կը կորսուի, իրաւ է որ ամբողջութեան կազմութիւնը մեզի կ'երեւայ իր մասերուն մէջ, բայց այդ մասերուն վերջնական մերձեցումը՝ ամբողջ մը վերականգնելու համար, տարօրինապէս դժուար կ'ըլայ, յաճախ նոյն իսկ անհնար»:

Իրաւ է որ միշտ Լէսինկն է իրաւունք ունեցողը: Մեծ գրագէտները, անոնք որ միշտ բան մը ունին ըսելու իրենց գործին մէջ, նկարագրութիւնը կը գործածեն իւր գործիք մը իրենց գաղափարն արտայայտելու: Անոնք միայն, որոնք գաղափար չունին արտայայտելու, որոնք աւելի տեսողներ են քան խորհողներ, անոնք իրենց ամբողջ ջանքը կը թափեն ամբողջ ճշգրութեամբ ցուցնելու իրենց ոճին մէջ ինչ որ կը տեսնեն, միմիայն դժուարութիւն մը յաղթած ըլլալու հաճոյքին համար: Ատկից առաջ կուգայ «նկարագրութեան համար նկարագրութիւնը», որմէ Ֆլոպէռ միշտ խորշած է, եւ զոր շատ ունին կոնքուռները, ինչպէս ժամանակակից գրեթէ բոլոր վիպասանները. եւ ատկից կուգայ որ նկարագրութեան մէջ մանրամասնութիւնը առաջնութիւն կը ստանայ: Ասիկա ալ նշանն է ճաշակի մոլորումի մը որու մէջ ինկած է նոր արուեստը եւ զոր ծայրայեղութեան տարած են կոնքուռները: Բայց պէտք է շատ մեղադրել իրենց՝ թերութիւն մը որուն կը պարտին թերեւս իրենց ամենէն մեծ յատկութիւնները: Կոնքուռները էջեր ունին, ուր բառերով իրերուն չըջագիծը, գոյնը, թափանցկութիւնը, լոյսին մէջ սառսուռը եւ ձայնը, եւ անոնց հոգեբանութիւնն ալ արտայայտած են: Գրականութեան մէջ նկարչութիւնը փոխադրուած տեսնելու անակնկալը բաւական մեծ հաճոյք մը չէ՞ ինքնին՝ որ մոռնանք իրենց չեղումը գրականութեան բուն ոգիին: Եւ արգէն առողջ, հաւասարակշիռ արուեստին քով, իր գոյութեան իրաւունքը չունի՞ այս կեցկաւոր, հիւանդ, բայց խկատիպ արուեստը, եւ կրնանք չխոստովանիլ որ ան ալ իր յատուկ հրապոյրն ունի, հրապոյր մը որ մեծ չէ միւսին գեղեցկութեան պէս, բայց որ աւելի վրդովիչ է:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ՀԱՏՈՒԱԾՆԵՐ ԿՈՆՔՈՒՈՆԵՐՈՒ ԳՈՐԾԷՆ (¹)

Երկրատեսարկ աղջիկ մը ինծի կ'ըսէր թէ սկսած էր իր կեանքին օրագիր մը բռնել եւ թէ յետոյ պատահած էր՝ վախճալով ինք իր հետ այդ գաղտնիքներ յայտնող խօսակցութեան մը մէջն։ Կինը տեսող մը ամօթխածութիւն ունի ինքզինքը ամբողջ տեսնելու եւ մինչեւ իր խօրը զիտելու։

Սիրտը բռն մըն է որ մարդուս հետ չծնիր։ Տղան անոր ինչ ըլլալը չզիտեր։ Գործարան մըն է զոր մարդը կեանքին կը պարտի։ Տղան ինք է միայն, ինքզինքը կը տեսնէ միայն, ինքզինքը կը սիրէ միայն, եւ ինք իրեն կը հանդուրժէ միայն։ ամենէն ահագինը, ամենէն անմեղը եւ ամենէն հրեշտակայինն է եսականներուն։

Երբեք իր վրայ չխօսիլ ուրիշներուն եւ միշտ իրենց վրայ խօսիլ տնոնց, առ է հաճելի ըլլալու ամբողջ արուեստը։ Ամեն մարդ զիտէ, եւ ամէն մարդ ալ կը մոռնայ ասիկա։

Հին տառերը, ղէմքին գեղեցկութիւնը՝ իր գծերուն գեղեցկութիւնն էր։ Նոր ժամանակներու մէջ ղէմքին գեղեցկութիւնը իր հրայրքին զիմազծութիւնն է։

Երաժշտական խառնուածքները զոր ճանչցած եմ՝ բոլորքս կանուստեան հակամէտ էին, ձեւարուեստական խառնուածքները՝ կաթալիկութեան։

Ինչ որ ամենէն աւելի կը սիրեմ երաժշտութեան մէջ, զայն ունկնդրող կիներն են։ Կարծես թէ թափանցանց ու տատուածային թովութեան մը տուէր են, Էրապի անշարժութիւններու մէջ զոր, երբեմն, սարսուռի մը հպանցքը կը խողտայնէ։ Ամէնքն ալ, մոտիկ ըրած ատենին, իրենց ղէմքին բուն արտայայտութիւնը կ'աւնեն։ Իրենց զիմազծութիւնը կը ծաղի ու կամաց կամաց կը ճառագայթէ աւելի անուշ զմայ-

(¹) Այս հաստատմանու մէջ ջանացիր ցուցնել Կոնքոններն իբր մշածող, իբր նկարագրող, իբր բանաստեղծ եւ իբր նոգեբան։

լանքով մը: Իրենց աչքերը թուլացումէ կը թրջին, կէս կը գոցուին, քովընտի կը կարսուին, կամ ձեղունը կը բարձրանան երկինքը փնտռելու: Հոգմահարներ, կուրծքերնուն վրայ, նուազկոտ բարախում մը ունին, մարմնով տրտի մը՝ ինչպէս թեւը վիրաւոր թռչունին: ուրիշներ՝ թուլցած ձեռքէ մը կը սաշին շրջադգեստի մը խորշին մէջ. եւ ուրիշներ, իրենց փղոսկրէ ճիւղերով, մանտրտիկ ձերմակ ահաւներու վրայ տարտա՛հ երանաւէտ ժպիտ մը կը հանդրիճեն: Բերանները ձգտուած, չրթները մեղմօրէն կիսաբաց, կը թուին ծծել հեշտութիւն մը որ կը թռչի: Գրեթէ ոչ մէկ կին կը համարձակի շեշտակի նայիլ երաժշտութեան: Շատերը, զլուխին մէկ ուսի վրայ ծռած, կը միան քիչ մը հակած՝ կարծես բանի մը վրայ որ անոնց ահանջն ի վար կը խօսի. աւսոնք, իրենց ծնօտին ստուերը ձգելով իրենց վզին մարգարտի շարքերուն վրայ իրենք իրենց խորը մտիկ ընելու ձեւ մը ունին: Երբեմն, բամբուլութակի մը սրտին վրայէն ցաւազին կերպով քեւթուած խազ մը անոնց զրնայլանքի ընդարմացումը կը զողջզացնէ. եւ մէկ ըռպէի դալուկներ, մէկ վայրկեանի թափանցկութիւններ, հազիւ նշմարելի, կ'անցնին իրենց մորթին վրայէն որ կը սարսռայ: Զայնէն առկախուած, թրթռազին ու փայփայուած, կարծես իրենց ամբողջ մարմնովը կը խմեն նուազարաններուն երգն ու յուզումը... Սիրոյ պատարագը, կարծես թէ առ է երաժշտութիւնը՝ կրկներուն համար:

Դեկտեմբեր ամսուն, անտառին մէջ կը սիրեմ տեսնել զիշերուան զալուստը՝ ցուրտէն միացող եւ հովէն կարմրած երկնքին մէջ, չէկ ծառերու մէջտեղանքէն, կրակէ արեւմուտքին վրայ: Կը սիրեմ լսել անտառին եզրը՝ ամբողջ դայլայլն ու ճուղիւնն այն ոստոստուն գիշերբարիին զոր թռչունները կ'ուղղեն արեւուն: Կը սիրեմ նայիլ այդ գոյնի մարմնող սգեւարներուն, այդ օրհասական փոփոխումներուն որոնք անտառին վրայէն այրած սաւակիին գոյն մը կ'անցունեն, երկնքին կարմիրը ձերմակով, քնացած ձերմակով մը կը սրեն: Վերջին անգամ թռչունները կ'երգեն. խաղերու հոյլ մը կը վառի, կը սլանայ, անտառին եզերքն ի վար կ'երթայ, յետոյ կը մարի. պզտիկ ձիւ մըն ալ եւ ամէն բան կը լսէ. այն պտեն զիշերին մէջ ու մառախուղին մէջ, չոր փայտին զարնուող թեւի հարուածներ են, որոնք չորցած տերեւի ձայն կը հանեն: Անծանօթը, խորհրդաւորը ամէն բանի ձեւերուն անորոշ սարսափը, ամէն կողմէ կը բարձրանայ: Լուսթիւնը կը զիւլուի, գիշակեր թռչուններ կ'իյնան, իրենց խուլ թռիչովը, մեծ ծառերուն ոստերուն վրայ, ձիւնի խոշոր հատիկներու պէս:

Այդ խաղին մէջ, էն վերջը, զմայլելի պար մը կար, պար մը չղջիկի գոյն գգեստներու, որոնք սեւ կէս - դիմակ մը ունէին իրենց դէմքին վրայ, ու չղարչներ կ'երեբցնէին իրենց շուրջը ինչպէս գիշերի թեւեր: Տարօրինակ, խորհրդաւոր, լսիկ հեշտութիւն մը ունէր այդ անուշ պարը մեռած կիներու եւ դիմակաւոր հոգիներու, որ կը հիւսուէր ու կը քակուէր լուսնի ճառագայթի մը մէջ: — Երբ սիրոյ հին նամակներ այրենք, բոցին մէջէն սեւցած յիշատակներ կ'ելլեն որոնք այս բոլորապարին կը նմանին:

Միշտ սա երազն ըրեր եմ, — ու ասիկա երբեք պիտի չսպասահի ինծի: Կ'ուզէի, գիշերանց, մոռնել պզտիկ դռնէ մը զոր կը տեսնեմ, պատի մը մէջ ժանգոտած, փակած, ծածկուած կղպանքով. կ'ուզէի մոռնել սլարտէզէ մը ներս որ ինծի անծանօթ ըլլար, պզտիկ, նեղ, խորհրդաւոր. քիչ լուսին կամ բնաւ. ներսը, կին մը զոր երբեք տեսած չըլլամ եւ որ տեսած մէկ պատկերիս նմանի. պաղ ճաշ մը. իրարմէ չենք քաշուիր. խօսակցութիւն մը, ուր ներկային վրայ չխօսուիր. ան տաւին մէջ քնացած Գեղուհիի ժպիտ մը, ոչ մէկ ծառայ . . . : Ու ելլել երթալ, առանց բան մը գիտնալու, ինչպէս երջանկութենէ մը ուր աչքդ կապուած քեզ տարած են, ու ոչ իսկ փնտռել կինը, տունը, դուռը, որովհետեւ պէտք է խորհրդապահ ըլլալ երազի մը հետ . . . : Բայց երբեք, երբեք ասիկա պիտի չսպասահի ինծի. եւ այս գաղափարը զիս կը տխրեցնէ . . . :

(Տիկին Ժէռվէզէ, Հում քաղաքին կրօնաբոյր աղքեցութեան տակ այնպիսի կոյր կրօնամոլութեան մէջ ինկած է որ այդ հոգեկան հիւանդութեան ծայրայեղ սաստկացմամբ, կը հաւանի իր միակ, պզտիկ, հիւանդոտ զաւակը երեսի վրայ ձգել՝ երբ իր խօստովանահայրը կը պահանջէ անկից իր ամբողջ սիրտը Աստուծոյ նուիրել: Ահաւասիկ երկու հատուածներ, վէպին ամենէն արտաշարժ էջերէն, որոնցմէ մէկուն մէջ Կոնքուաները կը ցուցնեն այդ հրէշացած մօր հոգիին չարչարանքը, եւ միւսին մէջ խեղճ պզտիկ լքուածին տրտմութիւնը:)

Այդ գիշերը, Տիկին Ժէռվէզէ չսպասեցաւ իր սենեակին պատէն կախուած խաչելութեան մը առջեւ ծնրադիր, ամբողջ գիշերն անցուց պզնձի կտորին հետ խօսակցելով, իր կեանքը պատմելով անոր, իր արցունքներն անոր ըսելով այն հոգիի բարեբանն գրեթէ ընտանի խօ-

սակցութիւններէն մէկուն մէջ ուր մարդ Աստուծոյ հետ կը խօսի , ան-
կից պատասխան մը կը սպասէ ու անոր հետ կը խօսուըռտի ինչպէս
գիմացը գտնուող անձի մը հետ :

Կ'ըսէր անոր .

— Քեզ ճանչնալէս ի վեր , Աստուած , ամէն բան զոհեցի քեզի...
Աստուած , Աստուած , կ'աղաչեմ , զթա՛ ու մոլիկ ըրէ՛ ինծի... այո՛ , ես
երկայն ատեն քեզ չճանչցայ ու չէի դտած ճամբան որ քեզի կը տա-
նի... Բայց դուն գիտես թէ՛ անկից ի վեր սրչափ խոր է իմ ցաւս , իմ
գառնութիւնս , թէ՛ սրչափ ինքզինքս կ'ատեմ , սրչափ իմ անցեալս ինծի
սոսկում , զըւանք կուտայ... եւ սակայն , ո՛վ Աստուածս , չեմ կրնար
ա՛լ մայր չըլլալ... չեմ կրնար ա՛լ զաւակս չսիրել... ա՛լ սա էվէլ է ,
Աստուած , ալ էվէլ է ստիկա... իմ առջի խոստովանահայրս ինծի
կ'արտօնէր զաւակս սիրել... անիկա կ'ըսէր որ այս սէրը քեզի չէսչիբ .
ինչո՞ւ հիմախուանը անկից աւելին կ'ուզէ ինձմէ... Ո՛վ Աստուածս , կը
տեսնեմ որ զլուխդ ինծի ծռած է , աչքերդ իմ վրաս հակած են , թե-
ւերդ իմ գիմացս բացուած են , ներողութեան եւ թողութեան նշան...
պատասխան չիտաս Աստուած... Աստուած , արդա՛ր է որ սա տղան
դժբաղդ ըլլայ ու տառապի իմ ձեռքովս... որ ես անոր արիւնը մոռնեմ...
եւ որ ծնած ատենս անիկա արդէն սախտեցի... որսկհետեւ անոր
ծնած օրէն խսկ իմ զլիւսուս զարկիր դուն... ա՛խ ասիկա դժգոհանք չէ՛
քեզի , Աստուած... կամքը քուկդ է... բայց հիմա ձգեմ որ մեռնի՞ , իմ
խեղճ անմիդ զաւակս... պատասխան տուր , Աստուած , պատասխան
չի՞տաս , Աստուած... :

Ու ելկելի կինը , հեծեծելով ու հեծկլտալով , գետինը , խաչելու-
թեան սոքը կը դալարուէր : Գիշերը կը յառաջանար , եւ իր պաղա-
տանքներուն յուսահատ վիշտը , աղաղակը այն շնորհին զոր հետզհետէ
աւելի բարձրածայն կը խնդրէր՝ վերջապէս արթնցուցին սպասուհին որ
կարծեց թէ մէկը մտած էր իր տիրուհիին սենեակը : Ոտքը բոսկի ,
եկաւ սենեակին դրան սոքեւ ականջ դրաւ սարսափած :

Ժամ մը ամբողջ այդ նոյն արցունքները , այդ նոյն հեծկլտանքները ,
այդ նոյն աղօթքները լսեց . — Պատասխան տուր , Աստուած... պա-
տասխան չիտաս , Աստուած... ձայնդ լսեմ , Աստուած :

Յետոյ ուրիշ բան չմնաց , ուժասպառութեան մէջ , բայց եթէ
խղիւղկ լաց մը , ողբեր , զրեթէ մարած ձայն մը , որ կը շարունակէր
մրմնջել . — Զաւակս է վերջապէս...

Վերջին բա՛ռը՝ այս անգութ լիգանիային , սենեակին լուրթեանը
մէջ , խաչուած Աստուծոյ մը ոգեւարին սոքը :

Այն ատենը անսահման տխրութիւն մը եկաւ խեղճ պզտիկին վրայ որ կը վաւտուէր, կարծես կ'աքսորուէր իր մօրմէն, իր տարիքին անարմար տխրութիւն մը, եւ որ, իր կեդրոնացմամբ, իր ինքնասուզմամբ, իր համր համակերպութեամբն ու սեւ խորութեամբը, գրեթէ մեծ մարդու յուսահատութեան մը կը նմանէր. ու մեծ մարդու երկայն անշարժ ձանձրոյթով մըն էր որ փողոցին քարերուն կը նայէր կամ դիմացի եկեղեցիին պատին: Իր վիշտը չէր ուզեր մխիթարուիլ ոչ ալ ինքզինքը մոռնալ:

Իր տղայութիւնը ալ աղմուկ չէր հաներ: Ալ պատուհանը չէր վազեր երբ փողոցէն երաժշտութեան ձայն լսուէր: Ալ սանդուխին ոտքերուն վրայ խումբով նստած պզտիկ աղջիկներուն չէր նայեր, անոնք տեսած ատենը ալ չէր տար անոնց այն հեշտական ուշադրութիւնն իր անկատար պզտիկ էակին, իմացականութենէն առաջ զարգացած իր զգայարանքներուն: Եւ ամբողջ օրուան մէջ ալ ուրիշ աղէկ բան մը չունէր բաց եթէ առտուան մէկ վայրկեանն իր անկողնին մէջ, այն տառանց յիշողութեան առաջին զարթումը զոր ամենէն մեծ վիշտերն անգամ կը ձգեն պզտիկ տղոց եւ որմէ յետոյ յանկարծ կը կորսուէր ժպտն իր պզտիկ դէմքին՝ որ կը յիշէր: Անկողնէն ելլելուն, անկուն մը կը փնտռէր, սենեակին ստուերոտ մէկ մասը, ուր, հեռուէն, կը պաղատէր իր մօրը որ զինքը տեսնէ, այն զաւկի աչքերովը որոնցմէ խուսափիլ կը ջանար Տիկին Ժէպէզէ, բայց որոնց հանդիպումը երբեմն ոտքէն գլուխը զանի կը դողացնէր: Շատ անգամ խեղճը, անոր դէմքին արտայայտութենէն խաբուելով, կարծելով իր առջի մայրը գտնել նորէն, կը յանդգնէր յառաջանալ, ոտքի ելլելով ու անոր քով երթալով. բայց իսկոյն կանգ կ'առնէր անոր սառ ձեւէն. ինչ որ իրեն համար կը կարծէր՝ կոռնքի ներքին մէկ մազթանքին, մէկ աղերսին, մէկ աղօթքին խանդակաթ մնացորդն էր, որ իր քովը մոլորած էր, առանց անոր մտածելու, իր մոռցուած զաւկին վրայ, եւ զոր անիկա շուտ մը ժողված էր ինչպէս իր մօրը սրտին փչրանքները:

Եւ իրիկունը, երբ սպասուհին անիկա կը պառկեցնէր՝ անոր վրայ ծռած, անոր վերմակը շտկելով, իր վերջին խօսքն էր միշտ.

— Ալ մայրիկը ինծի չը՝ սիրեր կոր:

ԷՏՄՈՆ ԵՒ ԺԻՒԼ ՏԸ ԿՈՆՔՈՒՌ



Կ Ո Յ Ր Ը

(ԳԻՒՂԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿՆԵՐ)



Նիտ կանանչներով պատուած բուններէն վեր բարձրացող ծառերուն հսկայ ճիւղերը կը տատանէին մութին մէջ՝ երբեք ստուերներ յօրինելով։ Ամառնային ծաղիկներու կծու ու ծանր հոտ մը կը տարածուէր հանդարտ օդին մէջ՝ զինովցնող բուրումներով։ Սեւ լուծեան մէջ մեքենաբար կը լսուէր միջատի մը բզզիւնը որ երբեմն կը մուցուէր նոյն իսկ իր միօրինակութեանը մէջ։ Եւ հեռուէն շունի մը ձայնը կուգար, որ խեղճուկ, հիւսնդ հաջիւնով մը կուլար։

Վայրկեանները կ'անցնէին ծանր ծանր, եւ տեսնել կը կարծէիր ամպերուն թաւալիլը որոնց գիծերը ջնջուած էին սեւի սեւ երկինքին վրայ։ Յանկարծ երբ շանը հաջիւնը կը մարէր յուսահատ ճիչերու մէջ՝ երգի մը եղանակը թրթռաց, որ հետզհետէ կը մօտենար։ Ձայնը հիանալի էր. առանց ճիւղի եղանակը կը հոսէր, դողդողալով, անուշ ելեւէջներով։ Մէկէն կը բարձրանար, գիւլթիչ, ուժեղ, եւ ահա կ'իջնէր նորէն կը մարէր իրր թէ ճնշուած կուրծքէ մը ելլէր։

Կամաց կամաց, երգին եւ գիշերուան ազդեցութեանը տակ գինով կը թուէր ինծի որ աներեւոյթ պարիկներ էին որ օդին մէջ կ'երգէին, մինչ ձայնին երազուն անուշութիւնը կարծես կը հաստատէր պատրանքս։

Բիչ մը ետքը ձայնը դադրեցաւ, եւ մօտակայ մարդերուն մէջէն դանդաղ խշրտուք մը լսուեցաւ։

Ամենքս ալ, լուռ, անշարժ, ընկալմանած էինք խոտերուն վրայ, մոքերնիս տարբեր մտածումներու մէջ թափառուն։

Հիմա կը հասկնայի որ այն ծառերուն ներքեւ մարդկային կուրծք մը կ'ուռէր յուզումներով։

Մութի ծաղերով եւ անհամար ստուերներով չըջանակուած, անկարելի էր տեսնել քայլ մը անդին. բայց արդէն թեթեւ ոտնաձայն մը մեզի կը մօտենար։

Չվախցանք. տանը վարձուորներէն մէկը ըլլալու էր պարտէզին մէջ մնացած. բայց նոյն վայրկեանին իսկ երեսիս վրայ շունչ մը զգացի. եւ ծանօթ ձայն մը կ'ըսէր ինծի.

— Կ'աղաչեմ, ո՞ր եմ։

Անմիջապէս հասկցայ. կոյրն էր։

Դեռատի աղջիկ մըն էր սիրուն, խարտեաշ, որ հօրը հետ մինակ կ'ապրէր մեր տանը մէկ սենեակը. կոյր էր. բայց դոց աչքերը պատճառ մը եղած չէին աւրելու գէմքին ամբողջ հրապոյրը, ցաւոտ հրասպոյր մը: Քովս նստաւ եղեամէն թրջուած խոտերուն վրայ:

— Դո՞ւն էիր երգողը, ըսի կամայ ձայնով մը, իբր թէ վախնայի խանգարել չուրջս ծանրացող բուրթիւնը:

— Այո՛, ըսաւ. եւ պահ մը ետքը աւելցուց. Օհ, խենթեցեր էի այս գիշեր. յիշատակներէս չարչարուած՝ պարտիզ վախայ, եւ մոռնալով ամէն բան, երգեցի, — հիմա չեմ գիտեր թէ ո՞ւր եմ, խարխալեւով հասայ հոս:

Միշտ հետաքրքիր եղած էի զիտնալ խելճ աղջկան անցեալը, առիթը չուղեցի փախցնել, եւ հարցուցի.

— Ի՞նչ յիշատակներէ յուզուած էիք:

— Վաղը, ըսաւ ծանր ծանր, եղբօրս մահուան տարեգարծն է:

— Եղբօ՞րդ . . .

— Ա՛յո, հիմա մի՛ հարցնէր, պատասխանեց. վաղն առտու կը պատմեմ քեզի:

Գիշերը բաւական յառաջացեր էր, տուն դարցանք: — Անհանգիստ անցուցի մնացած ժամերը. եւ դեռ բողբոջին չէր լուսեր, երբ ելայ: Կողմնակի պատուհանէ մը կը տեսնուէր ընդարձակ դաշտ մը որ կը վերջանար լեռներու շարքով մը: Հեռուն, միայնակ շոճի մը իր հաստ ճիւղերը կը տարածէր: Դեռ գիւղը կը քնանար: Հեռուէն բոփոփներու հնչուն ձայն մը կուգար. գիւղացիներ էին որոնք ձիերու վրայ ամաններով կաթ բեռցած կանուխէն մօտակայ տեղերը կը տանէին: Քիչ մը ետքը աքաղաղները խօսիլ սկսան. անոնց խառնուեցան ոչխարներուն մայլանը եւ հորթերուն բառաչիւնը:

Վարը տանտիրուհին արթնցած էր արդէն եւ կովու մը ետեւէն կ'երթար, խթանով մը դայն դիմացի դաշտը քշելով: Վար իջայ. տասը վարկեանէն ամբողջ գիւղը արթնցած էր: Հոսկէ մարդ մը կ'երթար մշակի գործիքները ուսերուն վրայ առած, հոնկէ աղջիկ մը կ'երեւար որ կաթ կը բերէր:

Լեռներու երկու ծայրերուն մէջտեղը խտացած գորշագոյն ամպերը հետզհետէ կը ճերմկնային կը վարդագունէին. հարիզոնին վրայ ցրուած բոլոր ամպի պատառները դէպի հոն կը վազէին: Հինգ վայրկեան ետքը թեւ թեւի կը քալէինք թարմ խոտերուն վրայ:

Հօտերը արածելու կը հանէին, ոչխարներուն մէջէն կ'երթայինք ծծելով մաքուր օդը, որուն մէջ վայրի ծաղիկներուն հոտը խառնուած մեղրի համ ունէր:

Եղեամէն թրջուած խոտերը մեր ոտքերուն տակ ճնշուելով, իրենց ներքեւ պահուած մանուշակներուն հոտը օգին մէջ կը տարածուէր:

Եկեղեցիին զանգակը տարտամօրէն կը ղողանջէր. հեռուն, այծերը խենդի պէս կը ցատքըտէին թաւուտներուն մէջ:

Ծառի մը տակ նստանք, եւ մինչդեռ աչքս մեր առջեւ փռուող Մարմարային կապոյտին մէջ կը մոլորէր, կոյրն ինծի իր պատմութիւնը պատմեց:

Այն ատեն իմացայ որ քանի մը տարի առաջ եղբօրը հետ երջանիկ կ'ապրի եղեր, երբ ծաղկախտի համաճարակի մը միջոցին՝ եղբայրը կը վարակուի: Զինքը հեռու կը պահեն եղբօրմէն. եւ հայրը մինակ կը հսկէր զաւկին վրայ: Մայրը մեռած էր արդէն:

Իրիկուն մը, չդիմանալով, հակառակ արգելքին, կամաց կամաց եղբօրը սենեակը կ'իջնէ, հազար վարանումներով, ու վախերով, չէ թէ իր անձին համար, այլ այն ահուելի անակնկալին զոր պիտի ունենար սենեակին անկիւնը եղբայրը պառկած տեսնելով:

Կը յաջողի եղբօրը սենեակը սպրդիլ, մինչդեռ հայրը՝ յոգնած՝ քնանալու դացեր էր:

Այդ դիչերը, առտուան դէմ, հիւանդին վիճակը կը գէշնայ, հոգեվարքը կը սկսի. եւ ա՛յ չէն կրնար զինքն անկէ բաժնել:

Քոյր ու եղբայր, իրարու հետ կը խօսին, զլուխ դիւի, արցունքներով:

Մեռնելու մօտիկ, եղբայրը կը խնդրէ քրոջմէն որ երգէ: Ազնիւ կ'ազուտօր ձայն ունէր:

Արցունքներէն խզուած, խեղճը իր եղանակներուն էն անուշը, էն տխուրը կ'երգէ:

Դեռ երգը չաւարտած, եղբայրը կը մեռնի:

Հետեւեալ օրը ինք ալ հիւանդ էր: Ծաղկախտն իրեն համար աւելի անգութ եղաւ. կեանքը չառաւ, բայց աչքին լոյսը յաւէտ ցամբեցուց:

Երբ այս պատմութիւնն աւարտեց, զլուին ուսիս դրաւ թէթեւօրէն եւ սկսաւ հեծկտալ. ան ի՛նչ տխուր են առանց արցունքի հեծկլըտանքները...

Յետոյ շտկուեցաւ ու նորէն սկսաւ երգել իր երգը, այն երգը որ որ առջի դիչերն ալ երգած էր:

Հիմա երգը աւելի տխուր կուգար ինծի, աւելի ցաւոտ:

Ու երգին եղանակն այնքան անուշ, այնքան յուզիչ էր որ խօսուն ցաւ մը, ներդաշնակուած հառաչ մը կը թուէր ինծի:

ՄԵՐ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԸ

Կնոջ դերին վրայ մեր հարցումին քանի մը պատասխաններ ընդունած ենք ընթերցողներէ եւ ընթերցողուհիներէ. պիտի հրատարակենք զանոնք յաջորդ թիւի մը մէջ, սպասելով որ նորից ալ ընդունինք:

Տիգրան էֆէնտի Հիւնքեարայէնտեան, Օտէսայի տաճկական Փոխ-Հիւպատոս, մէկ տարեկան Մաղիկ նուիրեց Ալզային վարժարանի մը:

Կարապետ էֆէնտի Մնտիկեան մէկ տարեկան Մաղիկ նուիրեց Կեսարիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին Կիւմիւշեան վարժարանին:

ԾԱՂԻԿԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Ն. Գ. Պոլիս. — Կը հարցընէք թէ՛ գեղեցկութիւնը ինչ տպաւորութիւն կը գործէ պզտիկ տղոց վրայ. — Պզտիկ տղաքը բնազդական տպաւորութիւն մը միայն կրնան կրել գեղեցիկին. շատ անգամ կը տեսնենք որ ապշած՝ մտիկ կ'ընեն երաժշտութեան կտորի մը կամ՝ զմայլանքի ըլլութիւն մը կ'ունենան աղուոր տեսարանի մի տուէլ. բայց ստիկա աւելի բնախօսական ազդեցութիւն մըն է գեղեցիկին քան մտաւորական: Յետոյ, գեղեցիկը իրենց համար փայլունն է. ինչ որ գիրենք կը զարմացնէ, գիրենք կը քաշէ, ան է գեղեցիկը. պզտիկ տղան՝ ինչպէս վայրենին՝ բուն հակում մը ունին վառ դայներուն, վայրենին ամէն բան կուտայ ծիրանիի կտորի մը համար, ու տղան ձեռքը կրակին կ'երկնցնէ՝ կարմիր ըլլալուն համար: Բայց այն զգացումը որ պզտիկ տղուն մէջ շատ աւելի զօրաւոր է քան գեղեցիկին զգացումը, օգտակարինն է. պզտիկ տղան վայրագ զրական մըն է, եւ աշխարհիս բոլոր ծաղիկներէն պիտի նախընտրէ կարկանդակի՝ կտոր մը: Մարդկային էականերու ամենէն բանաստեղծականը՝ ամենէն քիչ բանաստեղծն է:

Ա. Ն. Աղիսաւանքիս. — Ձեր քերթումներուն մէջ ճշմարիտ բանաստեղծի շեշտ մը կայ: Դուրեանէն ի վեր այդչափ Դուրեանական բան չէի կարդացած: Սա տեսակ տղեր ունիք որոնք շատ սիրուն են. « Ես ալ սեւ երգ մ'ըլլամ, սեւ երգ մը հաղնիմ, — Երգերու մէջ, ձայներու հետը հատնիմ: » Կրնաք տեսորակի մը մէջ ամբողջել ձեր բանաստեղծութիւններն ու հրատարակել:

Ս. Չ. Պոլիս. — Ձեր վէպին նիւթը լաւ է, թէեւ սոմանդիկ լան մը կայ դեռ անոր մէջ: Բայց գրելու եղանակիդ շատ հին է, եւ անփորձ: Հոգեբանական նկարագրութեամբ մէկ ինչ հարկ կայ Քոլպէրը, Կիկերոնը, Յովիգայէն, Պարիսոս ու վէպիդ խոսակցութիւններէն կարդացէք, Տոտէն ու Մարտիոսի մտաւորութիւններէն:

Հ. Հ. Պոլիս. — Տեղ մը բան գրեցիք որով որով մը չէք նմանիր երբ կը զրէք ձեր նամակին մէջ. « Կը յիշատակ եւ կը սպասեմ դուրս թիւններու լաւ ընդունելութեան: »

THE HISTORY OF THE

... of the ...
... of the ...
... of the ...
... of the ...
... of the ...

CHAPTER I

... of the ...
... of the ...
... of the ...



The ... of the ...

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ



ԾԱՂԻԿԻ տարեկան բաժանորդագինն է 30 դրու՝ Պոլսոյ համար եւ
40 դրու՝ գաւառներու համար : Բաժանորդագինը կանխիկ վճարելի :
10 բաժանորդ գտնողին մէկ տարեկան ԾԱՂԻԿ ձրի կը դրկուի :
ԾԱՂԻԿ ազդեք կ'ընդունի :
Ամեն նամակ եւ գրութիւն դրկել առ

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ԾԱՂԻԿԻ գրասենեակը, Զագմագնըլար, Յակոբեան խան, քիւ 9,
Արամեան տպարանի կից :



Գին 60 փարսյ